Ազգ Azg
29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 185(5268)
ISSN: 1829-1651

# Վարչարարության բեռը չի ավելանա, իսկ կենսամակարդա՞կը



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգային ժողովի հանձնաժողովներում երեկ սկսվեցին 2014 թվականի բյուջեի նախագծի քննարկումները: Ճիշտն ասած՝ սովորական ընթերցողին բյուջեի մասին պատմությունը սովորաբար հետաքրքրում է այնքանով, որքանով ինչ-որ բարելավում կարող է բերել նրա կյանքում, նրա ընտանեկան բյուջեի վրա բյուջեի ցուցանիշները ինչ-որ ձեւով ազդեցություն կունենան: Թե չէ ամեն տարի ներկայացվում են հարկեր-ՀՆԱ հարաբերակցությանը, դեֆիցիտի, մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ բարդուբարդ թվեր, իսկ Հայաստանի սովորական քաղաքացին այդ թվերի հետ չգիտե ինչ անի: Այս իմաստով բնական է այն հարցը, որ ծագում է եւ պատգամավորների, եւ հասարակ մարդկանց մեջ՝ արդյո՞ք աղքատության նվազում կլինի 2014-ն, մանավանդ աշխատավարձերի միասնական սանդղակի ներմուծմամբ մի զգալի գումարով բյուջեի բեռը ծանրանում է: Այս հարցերի ուղիղ ու վստահ պատասխաններ պատգամավորները փորձում էին ստանալ ֆինանսների նախարար Դավիթ Սարգսյանից, դրան զուգահեռ որոնում էին վարչապետ Տիգրան Սարգսյանի բյուջետային ուղերձում եւ նույն Դ. Սարգսյանի ելույթում, որոնք երեկ հնչեցին տնտեսական ուղղվածության հանձնաժողովների միասնական նիստում: Դ. Սարգսյան-պատգամավորներ երկխոսությունից կարելի էր եզրակացնել, որ անցյալ եւ այս տարի քանի որ աղքատությունը նվազել է՝ նույնը կարելի է ակնկալել նաեւ նոր՝ 2014 թվականին, ստվերը երկու տարի կրճատվել է, սակայն նոր տարում՝ հազիվ թե ստվերի կրճատման տեսանելի տոկոս նկատվի, քանի որ վարչարարությունը չի խստանալու:

Նշենք, որ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով եկամուտների ցուցանիշը նախատեսված է 1 տրիլիոն 134 մլրդ դրամ, ծախսերը՝ 1 տրիլիոն 244 մլրդ, եւ շուրջ 110 մլրդ բյուջեի դեֆիցիտն է: Վարչապետը չբացառեց, որ 2014 թվականին, եթե մեր բոլոր միջազգային ծրագրերով ունենանք կատարումների ավելի լավ ցուցանիշներ, կարող ենք ունենալ ծրագրայինից ավելի մեծ պետական բյուջեի դեֆիցիտ, քանի որ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականությունը 2014 թվականին նույնպես, ըստ նրա, կարող է խթանել տնտեսական աճը:

Տես էջ 3

# Օբաման չգիտե՞ր, որ Մերկելին լրտեսում են

## Համենայն դեպս, ԱԱԳ-ն դա է պնդում

ԱՄՆ-ի Ազգային անվտանգության գործակալությունը (ԱԱԳ) հերքել է այն հաղորդումները, թե նախագահ Բարաք Օբաման տեղյակ է եղել հատուկ ծառայության գործակալների կողմից Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հեռախոսազրույցների գաղտնալսմանը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Հոկտեմբերի 23-ին Մերկելը Օբամայի հետ հեռախոսազրույցի ժամանակ նրանից բացատրություն էր պահանջել գաղտնալսումների կապակցությամբ: Օբաման հավաստիացրել էր, թե ԱՄՆ-ը չի հետեւում նրա հեռախոսազրույցներին:

Հոկտեմբերի 27-ին «Ուոլ Սթրիթ ջորնըլ» թերթը գրեց, որ Անգելա Մերկելի եւ աշխարհի մի շարք այլ



ղեկավարների հեռախոսների գաղտնալսումները դադարեցվել են, հենց որ դրանց մասին հայտնի է դարձել Օբամայի վարչակազմին: Թերթի տվյալներով, ամռանը՝ ԱԱԳ գաղտնի ծրագրերի վերաբերյալ մամուլի հրապարակումներից հետո ԱԱԳ-ում սկսվել է ներքին քննություն, որից պարզվել է 35 երկրների ղեկավարների գաղտնալսումների մասին: Դրանից հետո Օբաման կարգադրել է դադարեցնել դրանք:

Թերթը նշում է, որ Օբաման 5 տարի, այսինքն՝ ամբողջ պաշտոնակալության ընթացքում տեղյակ չի եղել ԱԱԳ համապատասխան ծրագրերին: Դա պատճառաբանվում է նրանով, որ գործակալությունը միաժամանակ շատ մեծ թվով գործողություններ է իրականացնում, եւ նախագահին չեն հայտնում ընթացիկ բոլոր ծրագրերի մասին, որոնց անցկացման որոշումը ընդունվում է ԱԱԳ ղեկավարության մակարդակով:

ԱԱԳ պաշտոնական ներկայացուցիչները հայտարարել են, թե գործակալության ղեկավար Քիթ Ալեքսանդերը «կանցլեր Մերկելին առնչվող գործողությունները երբեք չի քննարկել» ԱՄՆ-ի նախագահի հետ: Գործակալությունում ընդգծել են, որ Օբամայի տեղեկացվածության մասին հայտնված տեղեկությունները «չեն համապատասխանում իրականությանը»:

Ավելի վաղ՝ կիրակի օրը, ամերիկյան հետախուզության աղբյուրներ վկայակոչելով, գերմանական Bild am Sonntag պարբերականը գրել էր, որ Ալեքսանդերը 2010 թ. Օբամային զեկուցել է Մերկելի հեռախոսի գաղտնալսման մասին: Գաղտնի փաստաթղթեր վկայակոչելով՝ Der Spiegel շաբաթահանդեսը հաղորդել էր, որ ամերիկյան հատուկ ծառայությունները Մերկելի հեռախոսազրույցները գաղտնալսել են 2002 թվականից, այսինքն՝ դեռ նախքան կանցլեր դառնալը:

Պ. Ք.

# Դասեր նախընտրական գործընթացից

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Ամիսներ շարունակ Փիթեր Քութուջյանի անունը հնչում էր ազգային շրջանակներում, եւ ամերիկահայերը իրական հույսեր էին փայփայում, որ դեկտեմբերի 15-ին մեկ այլ հայ կբարձրանա Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի աստիճաններով: Բայց այդ հույսերը հօդս ցնդեցին, երբ հոկտեմբերի 15-ին հայտարարվեցին Դեմոկրատական կուսակցության նախնական ընտրությունների արդյունքները: Յոթ դեմոկրատ թեկնածուներ պայքարում էին փոխարինելու Էդուարդ Մարքիին Մասաչուսեթսի 5-րդ կոնգրեսական տարածաշրջանում: Քեթրին Կլարքը Մելրոուզից ձայների 32 տոկոսով հաղթանակ տարավ տարածաշրջանի 24 քաղաքներում: Երկրորդ տեղում՝ ձայների 22 տոկոսով հայտնվեց Միդլսեքս Քաունթիի շերիֆ, մեր հայրենակից Փիթեր Քութուջյանը: Հայկական մեծ համայնքներ ունեցող Ուլթհեմ եւ Ուոթերթաուն քաղաքների ընտրողները իրենց քվեներով պաշտպանեցին նրան: Բայց պայքարը թեժ էր, եւ տիկին Կլարքը ձեռնհաս թեկնածու էր: Հայ քվեարկողների համար անշուշտ ձեռնհասությունից ավելի հայկական հարցերի նկատմամբ Քութուջյանի զգայնականությունն էր կարեւորը: Սակայն Կլարքի Վաշինգտոն գնալով դարձյալ լավ են ներկայացված լինելու բոլոր ընտրողների շահերը: Կլարքի համար հեռանկարները խոստումնալից են, քանի որ տարածաշրջանում դեմոկրատները գերակշռում են հանրապետականներին:

Ընտրությունների արդյունքը ավելի շատ պետք է մտահոգի տեղաբնակ հայերին, քան անձամբ իրեն՝ պրն Քութուջյանին, ով շարունակելու է իր պաշտոնը որպես շերիֆ կամ հավակնելու է գլխավոր դատախազի պաշտոնին:

Հաշվի առնելով, որ ընդհանրապես քվեարկողների աշխուժությունը մեծ չէր, ամերիկահայերը հրաշալի հնարավորություն ունեին ավելի մեծ թվով մասնակցելու ընտրություններին: Քութուջյանը հպարտ է, որ միայն մեկ շաբաթավերջի օրերին հայ կամավոր երիտասարդներ 16 հազար տուն էին այցելել քարոզարշավի շրջանակներում: Բայց քվեարկելուն մասնակցել էին 3-4 հազար հայեր միայն:

Տես էջ 2

# Վրաստանի նոր նախագահը հայտնի է, նոր վարչապետն էլ՝ մեկ շաբաթից

Վ. ՊՈՂՈՍՅԱՆ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն արդեն երեկ շնորհավորական ուղերձ է հղել Գեորգի Մարգվելաշվիլիին՝ 2013թ. հոկտեմբերի 27-ին Վրաստանի նախագահի ընտրություններում հաղթանակի կապակցությամբ: Եվ սա Վրաստանի պատմության համար էլ առաջին անգամ է, երբ նախագահի ընտրությունների նախնական արդյունքները, ըստ երկրի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, հայտարարվեցին հենց քվեարկության օրը, թեեւ երեկոյան բավականին ուշ:

Այդպիսով, արդեն հոկտեմբերի 28-ի կեսօրին պաշտոնապես հայտարարվեց ներկայիս վարչապետ Բիձինա Իվանիշվիլու ղեկավարած «Վրացական երազանք» կոալիցիայի թեկնածու Գեորգի Մարգվելաշվիլու հաղթանակի մասին՝ ձայների ավելի քան 62 տոկոս տպավորիչ ձեռքբերմամբ:

Վրաստանի դեռեւս նախագահ Միխեիլ Սաակաշվիլու «Միացյալ ազգային շարժում» կուսակցության թեկնածու Դավիթ Բակրաձեն ստացել է մոտ 21 տոկոս, խորհրդարանի նախկին խոսնակ Նինո Բուրջանաձեն՝ 10 տոկոս: Վարչապետի թեկնածուի օգտին ձայների մեծամասնություն է գրանցվել նաեւ հայաբնակ ու ադրբեջանաբնակ տարածաշրջաններում, որտեղ ավանդաբար հրաշալի, անգամ փայլուն արդյունքներ էին կարողանում «ապահովել» Սաակաշվիլու կուսակցությունն ու նրա թեկնածուները:



Եվ սա այն դեպքում, երբ մասնակցությունը Վրաստանի համար այնքան էլ բարձր ցուցանիշով չի բնութագրվում. ընտրություններին մասնակցել է ընտրողների մոտ 47 տոկոսը՝ նախորդ՝ 2008-ի նախագահական ընտրությունների ավելի քան 56 տոկոսի համեմատությամբ: Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների համար մասնակցության ցուցանիշի մասին խոսելն իսկ ավելորդ է, քանի որ նախորդ ընտրություններում դա գրեթե 100 տոկոս էր ներկայացվում:

Ամեն դեպքում, փաստեր, թե՞ կեղծարարություն, բայց վրացական իրողությունների համաձայն, նորընտիր նախագահին արդեն իսկ քվեարկության օրն ընդունել ու օրհնել է վրաց պատրիարք Իլյա Երկրորդը:

Տես էջ 8

# Դասեր նախընտրական գործընթացից

*1-ին էջից*

Քութուջյանը վաստակել էր 15.290 ձայն: Բայց եթե նույնիսկ բոլոր քվեարկելու իրավունք ունեցող հայերը տեղամասեր ներկայանային, ապա ընդամենը մեկ երրորդն էին կազմելու ընդհանուր թվի:

Իսկ ինչ վերաբերում է ընտրապայքարի համար գումարներ հայթայթելուն, ապա պետք է նշել, որ Քութուջյանը առաջ էր ընկել իր մրցակցից՝ ծախսելով 915 հազար դոլար Կլարքի 855 հազար դոլարի դիմաց, եւ դա լավ ավարտ էր խոստանում նրան: Բայց գումարների հայթայթումը դեռ բավական չէ: Եթե Մ. Նահանգներում գտնվող մեկ միլիոն հայերը չեն կարողանում անհրաժեշտության դեպքում զորակոչի ենթարկել իրենց քաղաքական ներուժը, ապա այդ թվաքանակը պիտանի չի կարող համարվել:

Ոչ ոք չի կարող ասել, թե ճշգրիտ քանի հայ է ապրում Մասաչուսեթսում, բայց կարելի է վստահորեն պնդել, որ 4000-ից ավելի պետք է լինեին ընտրացուցակներում ընդգրկվածները, եւ այդ դեպքում նրանք կարող էին վճռական դեր կատարել որեւէ թեկնածուի օգտին:

Մ. Նահանգներում հայերի մյուս խնդիրը այն է, որ նրանք չունեն քաղաքական երկարաժամկետ նպատակներ: Ոչ մի ծրագիր չկա հող տանելու ապագա թեկնածուների առաջխաղացման մասին: Թեկնածուները իրենք են իրենց պարտադրում համայնքին: Քութուջյանը որակական բարձր հասկանիշներով օժտված թեկնածու էր համանքային տարբեր (կրթական, եկեղեցական, հասարակական) կազմակերպություններում ծավալած իր հարուստ գործունեությունների կենսագրությամբ: Բայց նրան հարկավոր էր աջակցել առավել կազմակերպված ձեւով: Մենք պետք է անդրադառնանք նաեւ հայկական քաղաքական կուսակցությունների դերակատարմանը: Նրանք անցյալում կարեւոր դեր էին խաղացել մեր ժողովրդի ազատագրական պայքարի կազմակերպման ոլորտում: Այժմ նրանց դերը հայկականության՝ հայկական ժառանգության պահպանման ի նպաստ մղված պայքարով է նշանավորված, որը ինքնին խրախուսելի արարք է, բայց ոչ բավարար:

Շատերն են այսօր հայկական քաղաքական կուսակցությունների դերը սփյուռքում հարցական տակ դնում գտնելով, որ նրանց տեղը Հայաստանում է, քանի որ կուսակցությունների գաղափարախոսությունը ընդհանրապես քննության է ենթարկվում այն երկրում, որտեղ, ենթադրվում է, որ նրանք պետք է ծառայեն:

Հայաստանի պարագայում անոմալիա է տիրում, որովհետեւ ավանդական կուսակցությունները մեկուսացված են քաղաքական դաշտից մի քանի պատճառներով: Պատճառներից մեկը այն է, որ նրանց համարում են «տրանսպլանտներ» կամ «օտարածին տնկիներ»: Մյուս պատճառը երբեմնի «ավտորիտար համակարգի» տակ գտնվելու հետեւանքով ստեղծված կարծրատիպն է: Իրականում Հայաստան երկրում քաղաքական կուսակցությունները ստեղծվում են ոչ թե ինչ-որ գաղափարախոսության, այլ այս կամ այն օլիգարխի, իշխանավորի շահերի շուրջը:

Վերադառնալով հյուրընկալ երկրներին, որտեղ հայկական համայնքները բավական աշխույժ են, նշենք, որ քաղաքական կուսակցությունները կարող են արդարացնել իրենց գոյությունը տեղի ժողովրդավարական գործընթացներին առավել ակտիվ մասնակցությամբ: Հին ձեւաչափերով դրանք տեղ չեն կարող ունենալ գլոբալ տեսլականով մեծացող նոր սերունդների ժամանակաշրջանում: Նոր սերնդի անդամները կամ թափառում են ամայի վայրերում, կամ էլ դառնում են վտանգավոր տարրեր համայնքի կոլեկտիվ նպատակների համար՝ իրենց նորարարական ձեռնարկումներով:

Քութուջյանի նախընտրական արշավը քաղաքական համակարգին ինտեգրվելու փորձերն ուսումնասիրելու դասական օրինակ է: Մի կարեւոր հանգամանք, այդուհանդերձ, արժանի է հիշատակության եւ գովասանքի: Հայկական համայնքը բաժանված չէր տարբեր քաղաքական հոսանքների: Թեկնածուն վայելում էր ամբողջ համայնքի պաշտպանությունը, եւ հատկապես նրանց, ովքեր կամավոր հանձն էին առել տնից տուն շրջել: Չնայած Քութուջյանը հաղթանակի չհասավ, սակայն նա արժանավայել կերպով եւ խիզախորեն պահեց իրեն, եւ երախտապարտ է իրեն վստահված պաշտպանության համար:

Մեզ՝ հայերիս համար նախընտրական այս քարոզարշավը մի քննություն էր, ուսումնասիրության արժանի մի գործ՝ դասեր քաղելու համար եւ համայնքը նախապատրաստելու առաջիկա մարտահրավերներին: Այդ դասերը կօգնեն մեզ՝ պարտությունը վերածելու հետագա հաղթանակների ժողովրդավարական գործընթացների մեր որոնումներում:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ. Հ. Ծ.**

# «Հաղորդագրություններ բրիտանական մամուլում»




**Խմբագրությանը հասցեագրված մամլո հաղորդագրությամբ Կատյա Մինաս Փելթեկյանը տեղեկացնում է, որ լույս է ընծայել Հայոց ցեղասպանության վերաբերյալ անգլիական մամուլի հրապարակումների մասին երկու գիրք՝ «Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանը: Հաղորդագրություններ բրիտանական մամուլում: 1914-1923 թթ.» ընդհանուր խորագրով: Առաջինը (450 էջ) ընդգրկում է 1914-1919 ժամանակահատվածը, իսկ երկրորդը (526 էջ), 1920-1923 շրջանը (The Times of the Armenian Genocide: Reports in the British Press (1914-1923):**

**Երկու գրքերում հավաքված են ավելի քան հազար հոդվածներ, խմբագրականներ, թղթակցություններ, նամակներ, ինչպես նաեւ խորհրդարանական լսումների հաղորդագրություններ, որոնց միջոցով ընթերցողը տեղեկանում է Թուրքիայում եւ Կիլիկիայում իրականացվող ցեղասպանության մանրամասնություններին: Նաեւ Սեւրի եւ Լոզանի պայմանագրերին եւ թե ինչպես հայկական հարցը ի վերջո մոռացության մատնվեց շահադիտական նպատակներով:**

**Կատյա Մինաս Փելթեկյանը անհատ գիտաշխատող է: Ավարտել է Բեյրութի Ամերիկյան համալսարանը (ԲԱՀ) եւ Կանադայի Դելհաուզի համալսարանը: Անգլերեն է դասավանդել ԲԱՀ-ում (1988-2005 թվերին) եւ Հայկազյան համալսարանում (2005-2012 թվերին): Արաբական մամուլից Հայաստանին եւ հայերին վերաբերյալ հոդվածներ է թարգմանում անգլերեն եւ հրատարակում:**

**2000 թվականին հրապարակ է հանել իր առաջին գիրքը՝ «Հայոց ցեղասպանության ազդարարումը: Հաղորդագրություններ Հալիֆաքս Հերալդ պարբերականից, 1894-1922 թթ.» (Heralding of the Armenian Genocide: Reports in The Halifax Herald (1894-1922)) խորագրով, որտեղ հավաքված են կանադական այդ թերթում հրապարակված հոդվածները հայերի կոտորածների մասին: Գիրքը ժամանակին ձրի բաժանվել է Կանադայի խորհրդարանականներին, հանրային գրադարաններին, աշխարհի տարբեր համալսարանների գրադարաններին եւ գիտահետազոտական կենտրոններին: Ներկայումս աշխատում է 1875-1913 թվերի բրիտանական մամուլում լույս տեսած հոդվածների հավաքագրման աշխատանքների վրա:**

**Հ. Ծ.**



# Կենդանիների դիմակահանդես-շքերթ «Արեւորդի»-4 միջազգային բնապահպանական փառատոնի շրջանակում

Արդեն 4-րդ անգամ իրականացվող դիմակահանդես-շքերթին մասնակցում էին Երեւանի եւ Հայաստանի 6 մարզերի (Արմավիր, Գեղարքունիք, Արարատ, Տավուշ, Կոտայք, Լոռի) շուրջ



500 պատանիներ, ովքեր թափոններից պատրաստված կենդանիների դիմակներով եւ զգեստներով շքերթով անցան Երեւանի փողոցներով՝ մայրաքաղաքը լցնելով վայրի բնության շնչով:

Արդեն ավանդական դարձած շքերթն իրականացնում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը՝(FPWC) գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ համատեղ: Լինելով սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հանրային իրազեկումը համարում է իր առաքելության




մի մասը: Ընկերությունը մշտապես աջակցում եւ իր մասնակցությունն է ցուցաբերում FPWC-ի նախաձեռնություններին:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս երթը գլխավորում էր Գերմանիայի Բրեմեն քաղաքից ժամանած «Կոնֆուսաո» խումբը:

Մատենադարանի հարակից հարթակից մեկնարկած շքերթն ամփոփվեց Հյուսիսային պողոտայում՝ բացօթյա համերգով:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ իրականացվող դիմակահանդես-շքերթը կոչված է բարձրաձայնելու կենդանիների իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների մասին, հատկապես այն կենդանատեսակների, որոնք վտանգված են կամ գտնվում են անհետացման եզրին: Շքերթը նաեւ յուրօրինակ մրցույթ է: Մասնակից 25 խմբերը (որից 7-ը՝ երաժշտական) մրցում են 3 անվանակարգերում՝ լավագույն բնապահպանական զգեստ, լավագույն ստեղծագործական լուծում, լավագույն երաժշտական խումբ: Մրցույթի արդյունքները կամփոփվեն 2014 թ. փետրվարին: Թափոններին երկրորդ կյանք տված 18 խմբերն այս տարի ներկայացնում էին 14 տարբեր կենդանատեսակներ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# 50 քաղաքացի բնակարան է գնել, սակայն ներս մտնել չի կարողանում

Երեւանի 2-րդ Եկմալյան 5 հասցեի նորակառույց շենքում բնակարաններ ձեռք բերած քաղաքացիներ հասարակության, լրատվամիջոցների եւ իշխանությունների ուշադրությունը կրկին հրավիրում են իրենց խնդրին, որը 13 տարվա պատմություն ունի, եւ հսկայական գումար վճարած քաղաքացիներն այժմ չեն կարողանում իրենց բնակարաններում ապրել: Նրանց անգամ շենքից ներս թույլ չեն տալիս մտնել:

2005-ին մի շարք քաղաքացիներ «Նարեկ-Դավիթ» ՍՊԸ-ի հետ անշարժ գույքի առքուվաճառքի նախնական պայմանագրեր են կնքել, որոնք վավերացրել է նոտար Ալվարդ Մելքոնյանը: Համաձայն պայմանագրի, բնակիչները վճարել են բնակարանների համար նախատեսված գնի 90 տոկոսը, իսկ մնացած 10 տոկոսը պետք է վճարեին, բնակարանների սեփականության վկայականները ստանալուց հետո: Ամեն ինչ ընթացել է համաձայն պայմանավորվածության, սակայն 2011-ին քաղաքացիները կանգնել են փաստի առաջ: Շենքը կառուցապատող Գագիկ Պապոյանի դեմ դատավարություն է սկսվել, նրան ձերբակալել են, եւ պարզվել է, որ շենքի սեփականատերը Երեւանի ավագանու ԲՀԿ-ական նախկին անդամ Անդրանիկ Խալոյանն է, ով հայտարարել է, որ շենքը իր սեփականությունն է: Վերջինս փոխել է շենքի բնակարանների բանալիները, փոխել նաեւ շքամուտքի երկաթյա դուռը, ու այդ կերպ քաղաքացիները չեն կարողանում շենք մտնել:

Շենքի բնակիչ **Սուրեն Աբրահամյանի** խոսքերով` քաղաքապետարանից պարզել են, որ Խալոյանը ձեռք է բերել շենքի հողատարածքի ընդամենը մի մասը` 695 քմ-ից 500 քմ: Թե ինչպես է Խալոյանը տարածքը սեփականաշնորհել, բնակիչներին հայտնի չէ, միայն հայտնի է, որ շենքի սեփականատեր է 2008-ից. իրենց չեն տեղեկացրել սեփականատիրոջ փոփոխության մասին:

Բնակիչների ներկայացմամբ` շենքը կառուցվել է իրենց գումարներով, Խալոյանը շինարարական աշխատանքներին ոչ մասնակցել է, ոչ էլ ներդրումներ է կատարել, սակայն այսօր բազմաբնակարան շենքի սեփականատերն է: Բնակիչների հետ զրույցն էլ կարճ է տեւել: Խաբված քաղաքացիներին առաջարկել է գնալ ու Գագիկ Պապոյանից պահանջել գումարները: Այլ հանդիպումներ Խալոյանի հետ բնակիչները չեն ունեցել, մինչդեռ որպես իրավահաջորդ Խալոյանը պարտավոր էր բնակարանները տրամադրել բնակիչներին: «Փաստացի մենք Պապոյանի հետ կապ չունենք: Գումարները վճարել ենք, մեր բնակարանները պատրաստ են, արդեն 6 տարի է բնակարան ենք ձեռք բերել, բայց չենք կարողանում ապրել: Մենք ընդամենը մեր բնակարաններն ենք պահանջում», ասաց **Մհեր Մարությանը**` հավելելով, որ դիմել են նաեւ իրավապահ մարմիններին, սակայն նրանց բողոքի հիման վրա գործը դեռ ընթացքի մեջ է, քանի որ կառուցապատողի դեմ մեկ այլ գործ է ընթանում եւ բնակիչներն այդ գործում ներգրավվել են որպես տուժողներ:

Հիշեցնենք, որ ՀՀ Հատուկ քննչական ծառայությունում ավարտվել է «Գաբբնակշին» «Նարեկ-Դավիթ» եւ «Նարեկ-Գրադ» ՍՊ ընկերությունների տնօրեն Գագիկ Պապոյանի եւ նրա գործընկեր Սիմոն Աղազարյանի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունը: Համաձայն քրեական գործով ձեռք բերված ապացույցների` Պապոյանին եւ Աղազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով` խարդախությամբ բազմաթիվ անձանցից առանձնապես խոշոր չափերի գույք հափշտակելու հատկանիշներով: Պապոյանի եւ Աղազարյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորում: Հ. Հ.

# Վարչարարության բեռը չի ավելանա, իսկ կենսամակարդա՞կը

*1-ին էջից*

Տիգրան Սարգսյանն իր ելույթում նշեց բյուջեի նախագծի առանձնահատկությունը` առաջին անգամ ծրագրային բյուջեի նախագիծ է ներկայացվել: Այս առումով վարչապետը պատգամավորներին խնդրեց խիստ չդատել կառավարությանը, քանի որ մի երեք տարի է հարկավոր լինելու, մինչեւ ամբողջությամբ ներդրվի ծրագրային բյուջետավորման համակարգը, որը, վարչապետի կարծիքով, ավելի վերահսկելի կդարձնի բյուջեի արդյունքային ապահովումը:

Ընթացիկ տարվա տնտեսական աճը, վարչապետի խոսքով, անցած տարվա համեմատ, դանդաղում է: Աճի տեմպերի նվազման գործոնները նախ գործընկեր երկրներում սոցիալական, տնտեսական, քաղաքական իրադարձությունների` մեր տնտեսական ցուցանիշների վրա ազդեցությամբ են պայմանավորված` Հայաստանում բաց տնտեսական մոդել է ներդրված: Համաշխարհային բանկն ու Արժույթի միջազգային հիմնադրամը այս տարվա բոլոր տնտեսական ցուցանիշները նվազեցրել են` սպասվածից ավելի վաս միջավայրի ձեւավորմամբ տնտեսական աճի պարագայում (ռազմավարական գործընկերների հետ ապրանքաշրջանառությունն ու ու դրանով պայմանավորված ֆոնն այս տարի եղել է բացասական):

Ներքին գործընթացներում եւս բիզնես միջավայրի բարելավման առումով կան չլուծված խնդիրներ, այնպես որ այս առումով եւս նահանջ կա, մասնավոր ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում վերջին հինգ տարիներին կայուն նվազում է արձանագրել, չնայած` բիզնես միջավայրի բարեհարմարության առումով աշխարհիի 180 երկրի առաջին 40-ի մեջ ենք այնուամենայնիվ: Տ. Սարգսյանը ոլորտային անհամաչափություններով նաեւ պայմանավորեց վիճակը` հղում անելով վարչարարության, առեւտրի պայմանների, հարկային բեռի, ինչպես նաեւ պայմանագրերի կատարման գործընթացներին: Ասաց, որ մտահոգում է շինարարության ոլորտում ստեղծված վիճակը` բիզնես միջավայրի ցուցանիշի տեսակետից դեռեւս ունենք բյուրոկրատիայի բարձր աստիճան շինթույլտվությունների բնագավառում, վերջին հինգ տարիների ընթացքում շինարարության ոլորտում ունենք կայուն նվազում, եւ այդ միտումները շարունակվում են նաեւ 2013 թվականին: Բացասական գործոն է եղել 2013-ին գազի եւ էլեկտրաէներգիայի գների շեշտակի բարձրացումը Հայաստանում, որն էլ անդրադարձել է տնտեսական աճի ցուցանիշի վրա, ԿԲ-ն էլ ստիպված եղավ բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը (8,5 տոկոս), սա եւս զսպում է տնտեսական աճը: Կապված որակի երաշխիքների հետ` դանդաղ է ընթացել հյուսիս-հարավ ճանապարհի շինարարությունը, ինչը նույնպես բացասաբար է ազդել տնտեսական աճի վրա: Չնայած արդյունաբերության աճի տեմպերը բավական բարձր են, հանքահումքային արդյունաբերությունում ունենք 10-տոկոսանոց աճ, մշակող արդյունաբերությունը շարունակում է ցույց տալ բարձր աճի տեմպեր` շուրջ 8 տոկոս, գյուղատնտեսությունում նույնպես այս տարի ակնկալվում են տնտեսական աճի բարձր ցուցանիշներ: Ներմուծման աճը գերազանցող արտահանման աճի տեմպերը, 2013 թվականին մասնավոր տրանսֆերտների տեսակարար կշռի աճի տեմպի պահպանումը, եւ այս երկու գործոններով պայմանավորված` վճարային հաշվեկշռի բարելավման միտումը, 2013-ի տնտեսական տարվա մի շարք այլ առանձնահատկություններ պայմանավորել են 2014-ի բյուջեի շեշտադրումները. այսպես` առաջին անգամ չեն նախատեսվել վարչարարության բեռի ավելացում, այն է`առաջին անգամ հարկեր-ՀՆԱ ցուցանիշը մնում է նույնը: Սա, փաստորեն, քաղաքական որոշում է` պայմանավորված նրանով, որ 2013-ին այդ առումով բավականին մեծ ծավալի միջոցառումներ են իրականացվել, վարչարարությունը խստացել է ու դա բիզնես միջավայրի վրա բացասական ազդեցություն է թողել.«Այսուհետեւ շեշտադրումն անելու ենք ոչ թե վարչարարության գործիքների խստացման, այլ ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մեթոդների ներդրման վրա, որպեսզի ստուգումների քանակը նվազեցնենք եւ առաջին հերթին բացահայտենք



ռիսկային ոլորտներն ու ստուգումներ իրականացնենք ռիսկային ոլորտներում: Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ այս քաղաքական որոշումները պետք է հարկային ճնշումները 2014 թվականին 2013 թվականի համեմատ նվազեցնեն», ասաց վարչապետը:

Վարչապետը չշրջանցեց աշխատավարձերի ոլորտում իրականացվող փոփոխությունները` միասնական աշխատավարձային սանդղակի սահմանումը եւ ծրագրով սահմանված նվազագույն աշխատավարձի` 35 հազարից մինչեւ 70 հազար դրամ հասցնելու մասին նախատեսումը: Սոցիալական քաղաքականության շեշտադրումներն են փոխվում` հետեւանքների դեմ պայքարից անցում անելով աղքատություն ծնող պատճառների վերացմանը (աշխատատեղերի ստեղծում եւ պատշաճ կրթություն): Բացի դրանից` սոցիալական օժանդակության ֆորմալ մոտեցման փոխարեն այժմ ըստ կարիքների գնահատման օժանդակություն է լինելու` արդյունավետ համակարգի ներդրմամբ: Այս համակարգը թոշակների ոլորտը կարգի բերելուց հետո անցել է գործազրկության նպաստներին, որտեղ, վարչապետի իսկ գնահատմամբ, հատկացված միջոցների 94 տոկոսը չէր հասնում շահառուին` աշխատանք որոնող մարդուն, քանի որ համակարգն արդյունավետ չէր, այժմ առաջարկվում է ֆինանսական միջոցներն ուղղել աշխատատեղերի ստեղծմանը, քանի որ 18 հազար դրամանոց նպաստները ստանում էին սոցիալապես ապահով մարդիկ, որոնք աշխատանքի որոնման որեւիցե պետական ծրագրերից չէին օգտվում: Ի դեպ` պատգամավորներից **Արծվիկ Մինասյանը** լրագրողների հետ զրույցում պնդում էր, որ սա հաղորդում է հանցագործության մասին, որով պետք է զբաղվեն իրավապահ մարմինները:

Հունվարի 1-ից թոշակները ՀՀ-ում բարձրանալու են, եւ այստեղ նույնպես կա փոփոխություն. նվազ թոշակներ ստացողների թոշակների աճի տեմպը լինելու է ավելի բարձր, քան գումարային առումով ավելի բարձր թոշակ ստացողներինը, իսկ 93 հազար դրամ եւ ավելի թոշակ ստացողների թոշակների բարձրացում չի լինելու: 2014 թվականի հունվարի 1-ից 32 հազար մարդ աղքատության շեմից դուրս կգա միայն թոշակների բարձրացման շնորհիվ, համենայն դեպս` այդպես է կարծում վարչապետը:

Երեք բնագավառներում` կրթություն, առողջապահություն, սոցիալական ոլորտ, 2014 թվականին ավելանում է ֆինանսավորումը:

2014 թվականին շարունակվելու է արտահանմանը միտված արդյունաբերական քաղաքականությունը, տնտեսության դիվերսիֆիկացիան խորանալու է, կկիրառվեն նոր գործիքներ. արդյունաբերական հիմնադրամը կստանա լրացուցիչ ֆինանսական միջոցներ, պետություն-մասնավոր հասված համագործակցության սկզբունքի հիման վրա պետության պարտավորությունների կատարումը մասնավոր հասվածի նկատմամբ իրականացնելու համար` նրանց հետ ստորագրելով հուշագրեր եւ ստանձնելով փոխադարձ պարտավորություններ:: Ստեղծվելու է մի ապահովագրական ընկերություն` խթանել այն ձեռնարկություններին, առաջին հերթին, փոքր եւ միջին, որոնք կունենան արտահանման ծրագրեր: Կհիմնադրվի վենչուրային հիմնադրամ, որն մասնագիտանալու է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում նորարարությունների ֆինանսավորմամբ: Ավիափոխադրումներն են լիբերալացվելու, ինչը նույնպես վարչապետի կանխատեսմամբ նպաստելու է ՀՆԱ-ի աճին, տուրիզմի զարգացմանը, ուղեւորափոխադրումների ծավալի աճին, ինչպես նաեւ գների նվազմանը, ի վերջո` տնտեսական միջավայրի բարելավմանը:

Իր ելույթի վերջում վերստին անդրադառնալով սոցիալական քաղաքականությանը, վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ սոցիալական ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ- ում 10,7 տոկոսից դառնալու է 12 տոկոս, իսկ աշխատավարձերի եւ թոշակների բարձրացումը սկսվելու է հունվարի 1-ից: Ուժային կառույցների աշխատավարձերը շուրջ 10 տոկոսով բարձրանալու են հունվարի 1-ից, իսկ քաղծառայողների աշխատավարձերը` հուլիսի 1-ից: Ավելացվելու ենք 3 եւ 4 երեխա ունեցողների միանվագ նպաստները. այսօր կազմում են 430 հազար դրամ, այս ցուցանիշը դառնալու է 1 մլն եւ 1մլն 500 հազար դրամ, դրանց կանխիկ վճարումը հունվարի 1-ից 430-ից դառնալու է 500 հազար դրամ: Ձեւավորվել է նաեւ մայրական կապիտալ, որը բազմազավակ ընտանիքները կարող են օգտագործել բնակարանների ձեռքբերման եւ մի շարք առաջնահերթ նպատակներով: Երիտասարդ ընտանիքներին բնակարանների հասանելիության խնդրում 2014թ. առհասարակ արմատական փոփոխություններ են առաջարկվելու:

Վարչապետը խոստովանեց, որ կոռուպցիայի ընկալման ցուցանիշը երկու ոլորտներում` առողջապահություն եւ կրթություն, վատթարացել է, այնպես որ երկու ոլորտներում էլ 2014-ին կոռուպցիոն ռիսկերը նվազեցնող ֆինանսական մեխանիզմների փոփոխություններ պետք է կատարվեն: Առաջինում ապահովագրական նոր, արդյունավետ մեխանիզմ է ներդրվելու, իսկ կրթության ոլորտում անապահով ընտանիքների երեխաներին անվճար կրթությամբ ապահովելու համար 52 տոկոսով ավելացվելու են տեխնիկական, մասնագիտական կրթությանն ուղղվող գումարները:

# Ավատատիրության հայտնությունը՝ ժողովրդավարության պատմուճանի ներքո

Ներկայիս հետխորհրդային հասարակությունների մեկնաբանմանն ու բնութագրմանը նվիրված վարկածներից մեկը «հետխորհրդային նոր ավատատիրության» կոնցեպցիան է, որը սերում է 20-րդ դարի նշանավոր սոցիոլոգ-քաղաքագետ Մաքս Վեբերի պատրիմոնիալիզմի տեսությունից: Patrimonium լատիներեն տերմինը ծագել է Օգոստինոս կայսեր կառավարման օրոք եւ սկզբնապես նշանակում էր ընդամենը կայսեր մասնավոր գանձարան, որը նա ազատ ու ինքնակամ տնօրինում էր՝ հաշվի չնստելով ծերակույտի հետ: Ըստ Վեբերի՝ պատրիմոնիալիզմը ավանդական տիրապետության ձեւերից է, որի գլխավոր հատկանիշը բացառապես տիրակալից անձնապես կախված կառավարման հատուկ ապարատն է, որտեղ ամեն ինչ կառուցվում է հավատարմության եւ նվիրվածության վրա հիմնված պատրոն-կլիենտ (իր գործերի վարումն ուրիշին հանձնած- Մ.Հ.) հարաբերությունների, կամ, որ նույնն է, կլիենտելիզմի սկզբունքի վրա: Հենվելով Վեբերի տեսական ժառանգության վրա՝ իսրայելցի քաղաքագետ Շ. Այզենշտադտը մուծել է «նեոպատրիմոնիալիզմ» տերմինը եւ համապատասխան կոնցեպցիան: Նրա կարծիքով, հետխորհրդային կլիենտելիզմը ընդհանրության եզրեր ունի չինական ընտանեկանության (գուանսի) եւ լատինաամերիկյան ֆամիլիզմի հետ: Դրանցում սոցիալական վստահության պահանջմունքն ապահովվում է միայն «յուրայինների» համար՝ ոչ ֆորմալ անձնական կապերի, ընտանեկան-ազգակցական հարաբերությունների շրջանակներում:

Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգ Գ.Դերլուգյանը նեոպատրիմոնիալիզմը բնութագրում է որպես նեովոտչինային, կամ, որ նույնն է, նորահայրենակալվածքային կառավարման ձեւ: Դա կառավարումն է, որը հենվում է «ընտանիքի»՝ կլանային-կորպորատիվ կառուցվածքների շահերը սպասարկող մեխանիզմների վրա: Այդ համակարգն ավատատիրության կերպափոխված տեսակն է, երբ միայն երկրի նախագահն է իրապես ձեւավորում կառավարչական ընտրանին՝ իր կլանի կամ նրան մոտ կանգնած մարդկանց նշանակելով եկամտաբեր պաշտոնների՝ փոխարենը ակնկալելով նրանցից քաղաքական աջակցություն եւ բաժնեմաս՝ տեղերում հավաքված հարկերից ու եկամուտներից: Նրանք, ովքեր ստանում են եկամտաբեր պաշտոններ, աստիճանաբար դրանք վերածում են կիսաավատատիրական «բաժնեկալվածքների»: Այստեղից էլ համակարգային կոռուպցիան՝ հետխորհրդային երկրների «աքիլլեսյան գարշապարն» է:

Ռուս-ամերիկյան սոցիոլոգ Վ. Շլյապենտոխի կոնցեպցիան եւս հիմնվում է հետխորհրդային սոցիալական համակարգի, հասարակական գիտակցության եւ վաղեվրոպական ավատատիրականի հետ զուգահեռների վրա: Ինչպես եւ միջնադարյան Եվրոպայում՝ մերօրյա Ռուսաստանում (նաեւ՝ Հայաստանում) կյանքի հանրային եւ մասնավոր ոլորտների միջեւ սահմանները հստակ չեն կամ ընդհանրապես գոյություն չունեն. իշխանությունն ու սեփականությունն այնքան միահյուսված են, որ հաճախ անհնար է դրանք մեկը մյուսից զատել: Միջնադարյան բարոնների նման հետխորհրդային բյուրոկրատները՝ իրենց պաշտոնական լծակները, իշխանության բոլոր մակարդակներում, օգտագործում են սեփականության նկատմամբ վերահսկողություն հաստատելու համար: Նույն ժամանակ հարուստները փողը փո-




խանակում են իշխանության հետ, որպեսզի վերահսկեն քաղաքական որոշումները: Համապատասխանաբար անձնական կապերը հաճախ ավելի մեծ դեր են խաղում, քան այն կապերը, որոնք հիմնված են մարդկանց պաշտոնական դիրքերի վրա: Դա նշանակում է, որ երկրում առավել հզոր մարդիկ ոչ այնքան պետական գործիչներն են, որոնք ընտրվում են ժողովրդի կողմից, որքան նախագահի (կամ թագավորի, եթե անդրադառնանք անցյալին) մերձավոր շրջապատի մեջ մտնող մարդիկ: Կառավարման այդ ձեւն անվանվում է «հովանավորչական նախագահության» մոդել, որի էությունը քաղաքական իշխանության եւ բիզնեսի սերտաճվածության մեջ է:

Գործնականում ոչ միայն անհնարին է խզումն արդիականացված ավատատիրական ավանդույթներից, այլեւ կարող է հանգեցնել նույնիսկ տնտեսական եւ քաղաքական համակարգի ձեւաբեկմանը, այսինքն՝ ավելի գռեհիկ, արտաքուստ նոմենկլատուրային «ավատատիրական» կառուցվածքների կազմավորմանը: Ավատատիրական բարքերի ցայտուն դրսեւորումներին հայ հասարակությունն ականատես եղավ վերջերս. մականունավոր մարզպետի տան մոտ բռնկված փոխհրաձգությունը եւ «ձեռաց» կատարված սպանությունը, Գյումրվա դաժան դեպքերը, առավել դաժան իրադարձությունները Հարսնաքարում եւ այլն:

Ավատատիրական հոռի երեւույթների «վերածննդի» պատճառը ՌԳԱ իսկական անդամ, ակադեմիկոս Վլ. Ներսիսյանցը, նախ եւ առաջ, տեսնում էր այնպիսի սեփականության ձեւավորման մեջ, որը դեռեւս ազատ չէ իշխանությունից, եւ այնպիսի իշխանության մեջ, որը դեռեւս ազատ չէ սեփականությունից: Այդ երեւույթը առավել բնութագրական է ավատատիրական էտապի համար: Երկրորդ, իշխանության եւ սեփականության, քաղաքականության եւ տնտեսության համակեցությունը վկայում է այն մասին, որ հետխորհրդային հասարակության քաղաքական համակարգը դեռեւս չի հասունացել քաղաքացիական հասարակության եւ իրավական պետության հստակ տարբերակման համար: Երրորդ, Ներսիսյանցը գտնում է, որ դրա փաստացի դրսեւորումներն են՝ միասնական իրավական տարածքի, ընդհանուր իրավակարգի եւ միասնական օրինականության բացակայությունը, օրենքի դերի արժեզրկումը, ընդհանուր-իրավական սկզբունքների եւ նորմերի անգործությունը, տարբեր իրավական ակտերի միջեւ անհամաձայնությունները ու հակասությունները, իրավական կարգավորման խայտաբղետությունն ու քաոսայնությունը: Եվ, վերջապես, տարբեր իրավազորությունների եւ իրավակացությունների կորպորատիվ, դասախավային բնույթը. ամենօրյա կյանքում գերիշխում է կորպորատիվիզմի ոգին, իշխանությունների կողմից նորմատիվորեն սահմանված իրավունք-արտոնություններ, իրավական բացառություններ՝ հօգուտ առանձին անձանց, խմբերի, մասնագիտությունների, վարչական տարածքների եւ այլնի: Այս պայմաններում գլուխ է բարձրացնում «Էս սարն իմն է, էս ծառն իմն է» աղվեսային հոխորտանքը, որի վախճանն այնպես պատկերավոր է նկարագրել Հովհ. Թումանյանը իր «Չարի վերջը» գործում:

Ամփոփելով՝ կարող ենք առանձնացնել հետխորհրդային հայկական նորավատատիրության հետեւյալ տարրերը.

մասնավոր շահերի բացարձակ գերակայությունը հանրային շահերի նկատմամբ ոչ միայն կյանքի առօրեական մակարդակում, այլեւ առանձնապես պետական ծառայողների նախապատվությունների եւ վարքի մեջ,

իշխանության եւ սեփականության սերտ միահյուսվածություն. բազմաթիվ դեպքերում ողջ մարզեր վերածվում են լայնածավալ ավատական կալվածքների՝ անձնական տնօրինման պայմաններում,

անձնական կապերի մշտապես աճող գերակայություններ, որոնք քաղաքական, սոցիալական եւ տնտեսական ոլորտներում հիմնվում են ոչ ֆորմալ անձնական կապերի վրա: Այդ կապերի տիպական արտահայտությունը «տանիքն» է (ասա՝ ո՞վ է տանիքդ, ասեմ՝ դու ով ես),

քաղաքական կուսակցությունները եւ ընկերակցությունները ավելի ու ավելի դառնում են մասնավոր շահերի եւ առանձին քաղաքական գործիչների առաջխաղացման գործիք, այլ ոչ՝ շահերի արտահայտման եւ ներկայացուցչության ձեւ,

իշխանության վերին էշելոններում «պետության մեջ պետություն» ձեւավորումը որպես անձնական բարեկեցության եւ անվտանգության ապահովման միջոց,

երկրի «գավառականացումը», այսինքն՝ կյանքի բոլոր ոլորտներում համախմբման եւ համերաշխության միտումների որակական նվազումը:

Այսպիսով, ոչ պաշտոնական անձնական կապերի, պատրոն-կլիենտ հարաբերությունների ցանցերի լայն տարածվածությունը նոր հայրենա-կալվածքային կառավարման մոդելի արգասիքն է: Հարցումները նույնպես ցույց են տալիս, որ հայաստանաբնակ հայերի մեծամասնությունը հակված է սոցիալական, քաղաքական կյանքում ինչ-որ հաջողության հասնելու լավագույն միջոցը համարել անձնական «վերին» կապերը: 1990-ական թվականների վերջերին Ռուսաստանում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տվել, որ հարցվածների 84 տոկոսը կողմնորոշված է դեպի «վերին կապերը»: Նույնաբնույթ արդյունքներ գրանցվել են նաեւ 2004թ.: Այն հարցին, թե «ի՞նչն է օգնում գտնել լավ վարձատրվող աշխատանք», հարցվածների 66,7 տոկոսը վկայակոչել է անձնական կապերը եւ ծանոթությունը: Սակայն օգտաշահ կապերն ու ծանոթությունները ակտիվորեն օգտագործվում են միայն «որոշակի սոցիալական շրջանակներում» (ընդգրկում է բնակչության 10-14 տոկոսը): Խոսքն, իհարկե, պետական մարմիններում, բիզնեսում ազդեցիկ մարդկանց հետ անձնական կապերի ցանցի մասին է: Ակներեւ է, որ դրանք ավելի շուտ կոռուպցիոն՝ ցանցավորված կապեր են: Հենց դրանցով են հյուսված փոխադարձ պարտավորությունների ցանցերը, դրանցով են կատարված տարատեսակ ռեսուրսների փոխանակումները, որոնք ստանում են համընդհանուր փողային արտահայտություն: Անկասկած, Հայաստանի ինստիտուցիոնալ համակարգը որոշակի փուլում ձեռք է բերել համընդհանուր շուկայական բնույթ՝ «ամեն ինչ ներկայացված է վաճառքի»: Փողային համարժեքով են հաշվարկվում գործնականում բոլոր ռեսուրսները, որոնց փոխանակմամբ են ուղեկցվում պետական գործառնությունները: Ըստ էության, այդ ցանցերի, եւ, առհասարակ, նեոպատրիմոնիալիզմի խնդիրը, եթե կուզեիք իմանալ, ազգի որակի բարձրացման խնդիրն է: Նրա լուծումը գտնվում է կյանքի հանրային եւ մասնավոր ոլորտների փոխօտարման հաղթահարման կետում: Այլապես հայրենի «ժողովրդավարության» զավեշտախաղը կշարունակի մեզ անընդհատ հիշեցնել Աղավնու «Շիրակ» վեպի տողերը.

*Անկախ Հայաստան,*
*Նիկոլի բոստան,*
*Խմբապետ Կոստան...*

Թող Աստված փրկի եւ ազատի մեզ այսօրինակ անձուկ ու ճնշիչ «ժողովրդավարությունից», որն ավելի ստույգ, եթե փորձենք գտնել ճիշտ բառը, ժողովրդավառությունն է եւ ոչ ամենեւին ժողովրդավարությունը... Ի տես այս տխուր իրողության՝ հարց է ծագում. մի՞թե ՀՀ-ում անհնար է ճշմարիտ ժողովրդավարության ստեղծումը, թե՞ դա մեզ համար չէ: Թեեւ կլիենտար կերպով կազմակերպված սոցիալական ցանցերը լրացնում են «պետության պակասությունն» ու «վստահության դեֆիցիտը» ամենօրյա կյանքում, իրականում նրանք հիմնաքանդում են Հայաստանի հանրային ինստիտուտները: Ըստ երեւույթին ժողովրդավարություն կոչվածը որոշ երկրների համար չէ՞, զավեշտալի մի հարցադրում, որ նման է Խոսե Օրտեգա ի Գասետի «Թարգմանության թշվառությունն ու պերճանքը» գործում առկա տեսակետին. «... ներկաներից մեկը նշեց, որ որոշ գերմանացի փիլիսոփաների անհնար է թարգմանել: Զարգացնելով իր տեսակետը՝ նա կոչ արեց ստեղծել մի ուսմունք, որն էլ կորոշի, թե որ փիլիսոփային կարելի է թարգմանել, որին՝ ոչ»:

**ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի փիլիսոփայության ամբիոնի վարիչ**

# Միջազգային

## Գեներալ Վայակը վերադարձել է ադրբեջանական բանակ

Ադրբեջանի պաշտպանության նախարարի հրամանով գեներալ Վայակը կրկին ծառայության է կոչվել եւ նշանակվել ՊՆ ներքին անվտանգության վարչության բաժիններից մեկի պետ:

Անատոլի Վայակը գեներալ-մայորի զինվորական կոչման արժանացել է դեռեւս խորհրդային տարիներին եւ մեկն է նրանցից, որ Ադրբեջանի անկախացումից հետո նախընտրել է մնալ այդ երկրում: Գեներալ Վայակը պաշտոնազրկվել էր Սաֆար Աբիեւի կողմից, բայց հայրենիք չէր վերադարձել: Մինչեւ վերջերս նա համարվում էր ռազմական փորձագետ եւ հայտնի էր «կայծակնային պատերազմի տեսությամբ»:

Որքանո՞վ է Վայակի վերանշանակումն արդարացված զուտ ռազմական առումով, թողնենք բնագավառի իրազեկ փորձագետներին: Մեզ ավելի շատ հետաքրքրական է թվում երեւույթի քաղաքական կողմը: Վայակին պաշտոնի կոչելու առթիվ տեղեկատվության առթիվ ադրբեջանցի անանուն փորձագետը կարծիք է հայտնել, թե նա «համարվում է գլխավոր շտաբի պետ Նաջմեդդին Սադիխովի մերձավոր ընկերը»:

Ավելի վաղ ադրբեջանական աղբյուրները կարծիք էին հայտնում, որ Նաջմեդդին Սադիխովը եւ Սաֆար Աբիեւը «հավասարակշռում են Ադրբեջանի բանակաշինության երկու՝ ռուսաստանյան եւ արեւմտյան ուղղությունները»: Ադրբեջանի պաշտպանության նորանշանակ նախարարն, ինչպես Բաքվի լրատվամիջոցներն են բնութագրել, «սկսել է մաքրել սաֆարաբիեւյան ախոռները»:

Պաշտպանության նախկին նախարարի մերձավոր շրջապատից այլեւս գրեթե ոչ ոք չի մնացել իր պաշտոնին: Կարծիքներ կան, որ «կադրային փոփոխությունների երկրորդ փուլում կպաշտոնազրկվեն բանակային կորպուսների մի քանի հրամանատարներ»: Այդ թվում առաջինը մատնանշվում է այսպես կոչված «կենտրոնական ուղղության» կամ Բարդայի բանակային կորպուսի հրամանատարի անունը:

Սրանք զուտ փոփոխություննե՞ր են, թե՞ ադրբեջանական բանակում տեղի է ունենում «երկու ուղղությունների հավասարակշռության» վերանայում՝ ահա թերեւս գլխավոր հարցը: Այս իմաստով գեներալ Վայակի վերանշանակումը կարող է խորհրդանշական լինել: Նախկին խորհրդային գեներալի անելիքը ո՞րն է լինելու Ադրբեջանի պաշտպանական գերատեսչությունում:

Այս իմաստով բավական հետաքրքրական է թվում ամերիկացի փորձագետ Մերիի կարծիքը, համաձայն որի «Ադրբեջանի եւ ամբողջ Հարավային Կովկասի նշանակությունն ԱՄՆ համար նվազում է»: Փորձագետը դա կապել է Աֆղանստանից ամերիկյան զորքերի հեռանալու եւ Իրան- ԱՄՆ հարաբերություններում լարվածության թուլացման հետ:

Փորձագետը խիստ քննադատության է ենթարկել Ադրբեջանին, որի իշխող վարչախումբը «չի ցանկանում հասկանալ, որ ամերիկյան եւ եվրոպական արտաքին քաղաքականության համար ժողովրդավարությունը եւ օրենքի գերակայությունը հիմնարար են, դրանք անհնար է շրջանցել»: Խոսքը Ադրբեջանի նախագահական «ընտրություններին» ԱՄՆ պետական դեպարտամենտի տված գնահատականի առթիվ պաշտոնական Բաքվի վերաբերմունքի մասին է:

ԱՄՆ արտաքին քաղաքականության հարցերով խորհրդի անդամ Մերիի կարծիքով՝ Ադրբեջանում «ավարտվում են նավթից եկամուտների հաշվին բարգավաճման հեշտ տարիները, գալիս են ավելի բարդ տնտեսական մարտահրավերների տարիներ»: Փաստացի ամերիկյան փորձագետն ասում է, որ Ադրբեջանն այլեւս այն հետաքրքրությունը չի ներկայացնում, ինչը թվում է Բաքվում իշխող վարչախմբին:

Բայց Իլհամ Ալիեւի կողմից վերջին օրերին ձեռնարկված քայլերն էլ վկայում են, որ Բաքվում դա հասկացել են: Այն, ինչի վրա փորձ էր արվում կառուցելու արտաքին քաղաքականությունը, գոնե այս պահին այլեւս իրատեսական չի թվում: Իսկ որ Ադրբեջանում կանխածրագրվել էր Իրանի դեմ ԱՄՆ-ի եւ Իսրայելի ռազմական գործողությունների դեպքում առավելագույն օգուտը քաղել, ներառյալ՝ ԼՂՀ դեմ նոր պատերազմի սանձազերծումը, թվում է՝ կասկածից դուրս է:

Հետեւաբար, ընտրվում է նո՞ր ուղղություն: Եվ նախկին խորհրդային գեներալ Վայակի վերանշանակումը չի՞ ակնարկում, որ Բաքուն հայացքը թեքում է դեպի հյուսիս:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՈՒՄ

## Փշալարեր ռուս-ուկրաինական սահմանում

Ռուսաստանցի սահմանապահները սկսել են փշալարեր անցկացնել Ուկրաինայի սահմանի վրա, հաղորդում է ԻՐՏԱ հեռուստաալիքը:

Փշալարային կառուցվածքներ ի հայտ են եկել մասնավորապես Լուգանսկի մարզում: Թե դրանք կոնկրետ երբ են ստեղծվել, չի հաղորդվում: Ընդգծվում է, որ ռուսաստանցիների նախաձեռնությունը չի ուրախացրել տեղաբնակներին, որոնք անցյալում փաստորեն անարգել հատում էին սահմանը: Բանն այն է, որ ուկրաինացիներից շատերը մերձավոր ազգականներ ունեն ՌԴ սահմանամերձ գյուղերում: Հիմա նրանց տեսնելը զգալիորեն դժվարացել է:

Հեռուստաալիքի տվյալներով, ավելի վաղ Ռուսաստանը եւ Ուկրաինան պայմանավորվել էին Լուգանսկի մարզում սահմանամերձ շրջանների բնակիչների համար պարզեցված անցակետի ստեղծման վերաբերյալ, բայց նախագիծը այդպես էլ չէր իրագործվել ֆինանսավորման պակասի պատճառով:

Ինչպես նշում է «Տրանսպորտային ռազմավարությունների կենտրոնը», սահմանային գյուղերում իրավիճակի փոփոխությունը կարող է պայմանավորված լինել Եվրոմիության հետ ասոցացման համաձայնագիր ստորագրելու պաշտոնական Կիեւի մտադրության հետ: Ավելի վաղ Ռուսաստանը քանիցս քննադատել էր այդ ծրագրերը, Ուկրաինային առաջարկելով դառնալ Մաքսային միության լիիրավ անդամ (ներկայումս ունի դիտորդի կարգավիճակ):



Ռուս-ուկրաինական ցամաքային սահմանի երկարությունն ավելի քան 2 հազար կիլոմետր է: Երկու երկրների արտգործնախարարները սահմանագծման համաձայնագիր էին ստորագրել 2010-ի մայիսի 17-ին Կիեւում: 2012-ի նոյեմբերին Չեռնիգովի մարզում՝ «Սենկովկա» ավտոմոբիլային անցակետի մոտ, տեղակայվել էր առաջին սահմանային սյունը:

## Չինաստանի նոր դերակատարությունը միջազգային ասպարեզում

«Չինաստանի դերը միջազգային ասպարեզում փոխվում է», տեղեկացնում է Արտաքին հարաբերությունների եվրոպական խորհրդի ասիական կենտրոնի (տնօրեն՝ Ֆրանսուա Գոդեման) «Վերլուծություններ Չինաստանի մասին» հոդվածաշարի վերջին հաղորդագրությունը: «Երկիրը պայքարում է եզրեր գտնելու ուրիշի գործերին չմիջամտելու իր ավանդական արտաքին քաղաքականության եւ ամբողջ աշխարհում անընդհատ աճ արձանագրող իր տնտեսական ներկայության միջեւ: Չինաստանի հարաբերությունները Իրանի հետ եւ նրա արձագանքը սիրիական ճգնաժամի առնչությամբ նշանակալի օրինակներ են, որ Չինաստանը սկսել է վերանայել իր արտաքին քաղաքականության դիրքորոշումները: Նաեւ ապացույց են նրա նոր շահերի եւ հետաքրքրությունների՝ Մերձավոր Արեւելքում եւ թե ինչու է Պեկինը տատանվում պաշտպանելու Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ-ի բանաձեւերը:



Կենտրոնի «Վերջ չմիջամտելու քաղաքականությանը» զեկույցում անդրադարձ է կատարվում Իրանի, Սիրիայի, Սուդանի, Հյուսիսային Կորեայի եւ Բիրմայի հետ Չինաստանի նոր արտաքին քաղաքականության դրսեւորումներին եւ նրա նոր պատասխանատվություններ ստանձնելու պատրաստակամությանը:

Սիրիական ճգնաժամի առթիվ ՄԱԿ-ի բանաձեւերին վետո դնելը խորհրդանշում է Չինաստանի նոր դերակատարումը միջազգային ասպարեզում: Չինացի վերլուծաբանները համաձայն են վերջ տալ բռնություններին Սիրիայում, բայց ոչ Արեւմուտքի գծած սցենարով: Նրանք հասկանում են, որ ժողովրդավարությունը «պաշտպանելու» քողի ներքո Արեւմուտքը «վարչակարգեր փոխելու» իր վտանգավոր մտադրություններն է ցանկանում օրինականացնել: Ըստ զեկույցի՝ իրենց վետոներով չինացի դիվանագետները ցանկանում են դաս տալ արեւմտյան երկրներին, հասկացնելով, որ հեռու մնան ուրիշ երկրների ներքին գործերին խառնվելու իրենց մոլուցքից: Յան Ցուետոնգի կարծիքով, օրինակ, Անվտանգության խորհրդի բանաձեւերը տապալելը Չինաստանի շահերից է բխում, քանի որ նվազեցնում է պատերազմի հավանականությունը Մ. Նահանգների եւ Իրանի միջեւ, միաժամանակ ամրապնդում է Պեկինի գործակցությունը Մոսկվայի հետ:

Իսկ Իրանի հետ հարաբերությունները սերտացնելու հիմքում ընկած է էներգառեսուրսների ապահովման խնդիրը: Չինացի մեկնաբանները անշուշտ հասկանում են, որ այդ սերտացումը իրենց ներքաշելու է Իրանի միջուկային ծրագրի շուրջը ծավալված թնջուկի մեջ: Հակառակ տնտեսական սահմանափակումներին միանալու Արեւմուտքի կոչերին, Չինաստանը անտեսելով քննադատությունները, առաջնորդվում է իր տնտեսական եւ անվտանգության շահերի համաձայն՝ հույս ունենալով, որ Իրանի նորընտիր նախագահ Ռուհանին համապատասխան քայլերով Չինաստանին կվերաբերվի որպես «ռազմավարական հնարավորության»՝ պայքարելու Արեւմուտքի պարտադրած «փակուղու» դեմ:

Հ. Ծ.

## Իսրայելն ազատ կարձակի պաղեստինցի բանտարկյալների երկրորդ խմբին

Իսրայելի կառավարությունը պաղեստինա-իսրայելական հաշտության բանակցությունների շրջանակներում հաստատել է պաղեստինցի կալանավորների երկրորդ խմբի արձակումը: Այդ մասին հաղորդում է BBC News հեռուստաալիքը:

Կառավարության ընդունած ծրագրի համաձայն, ազատություն կստանան 26 կալանավորներ, որոնք դատապարտվել էին նախքան Օսլոյի 1993 թ. համաձայնագրերի կնքումը իրենց կատարած հանցագործությունների համար: Նրանցից յուրաքանչյուրը մինչեւ օրս բանտում անցկացրել է 19-ից մինչեւ 28 տարի: Արձակման ստույգ օրն առայժմ չի նշվում, սակայն, տեղական մամուլի տվյալներով, դա կարող է տեղի ունենալ արդեն հոկտեմբերի 29-ին:

Իսրայելական բանտերից պաղեստինցի կալանավորների արձակումը պաղեստինա-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի մի մասն է: Իսրայելը մտադիր է ազատ արձակել ընդհանուր առմամբ 104 մարդու:

Պաղեստինցի բանտարկյալների առաջին խումբը (դարձյալ 26 մարդ) ազատ էր արձակվել օգոստոսի լույս 14-ի գիշերը:

Տարածքային հակամարտության վերջնական կարգավորման նպատակով պաղեստինա-իսրայելական բանակցությունները վերսկսվեցին 2013 թ. հուլիսի վերջերին ԱՄՆ-ի միջնորդությամբ: Մինչ այդ կողմերը վերջին երեք տարիներին հրաժարվում էին նստել բանակցությունների սեղանի շուրջը:

# Սփյուռք

**Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ-110**

## Դասական երաժշտության 2 անկրկնելի համերգ Վլադիմիր Սպիվակովի եւ Հասմիկ Պապյանի մատուցմամբ

Հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի 110-ամյակին նվիրված միջազգային փառատոնի շրջանակներում նոյեմբերի 10-11-ը Հայաստանում համերգներով հանդես կգա Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Վլադիմիր Սպիվակովի գլխավորությամբ:

Երեւանյան համերգը կկայանա նոյեմբերի 10-ին Արամ Խաչատրյան համերգասրահում, եւ նվիրված են Հայաստանի կամերային նվագախմբի հիմնադիր, անվանի ջութակահար, դիրիժոր Զարեհ Սահակյանցի 80-ամյակին:

Իսկ նոյեմբերի 11-ին Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը Վ. Սպիվակովի ղեկավարությամբ, ելույթ կունենա Գյումրիում: Այդ համերգը կկայանա «Գյումրին 2013թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում:

Որպես մենակատարներ հանդես կգան Ալեքսանդր Ռոմանովսկին (դաշնամուր, Իտալիա), Վասիլի Լադյուկը (բարիտոն, Ռուսաստան), Ջուլիետ Գալստյանը (մեցցո-սոպրանո, Շվեյցարիա) եւ Հասմիկ Պապյանը (սոպրանո, Ավստրիա):

Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հայաստանյան համերգները տեղի են ունենում Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարությունների եւ ԱՊՀ երկրների Հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի աջակցությամբ

Արամ Խաչատրյանի անվան միջազգային փառատոնի կազմակերպիչն է Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը:

Ս. Հ.

## Հայերս տոնում ենք անիմացիայի 75-ամյակը

Երեկ լրագրողների հետ հանդիպմանն անիմատոր Դավիթ Սահակյանցը ուրախությամբ նշում էր, որ անիմացիան այս 75 տարիների ընթացքում դեպի լավն է գնում:

Հայկական անիմացիայի զարգացման գործում մեծ ավանդ ունի Ռոբերտ Սահակյանցը, որի ստեղծագործական ձեռագիրն ու առանձնահատկությունը տարբերվում են մյուսներից: Այժմ նույնիսկ Կոլումբիայի համալսարանի անիմացիայի դպրոցում առանձին դասաժամով ուսուցանվում է հայկական անիմացիա, որը մեծ ձեռքբերում է հայ արվեստի հանրահռչակման համար:

Այսօր գործում են առանձին-առանձին ստուդիաներ, որոնցից է «Ռոբերտ Սահակյանց» փրոդաքշնը, որն իր չորսամյա գործունեության ընթացքում արդեն բավականին աշխատանքներ է կատարել:

Դ. Սահակյանցը ցավով նշեց, որ եթե Խ. Միության ժամանակ ստեղծված ֆիլմերը բոլոր կինոթատրոնները, հեռուստաալիքները պարտավոր էին ցուցադրել, ապա այսօր, ցավոք, այդ քաղաքականությունը չի գործում, այդ իսկ պատճառով էլ շատ ու շատ անիմացիոն ֆիլմեր, մուլտֆիլմեր հեռուստադիտողին հայտնի չեն:

Դավիթ Սահակյանցի խոսքով, իրենք անիմացիոն ֆիլմերում փորձում են պահպանել հայկականը, ազգայինը եւ մտնելով եվրոպական շուկա, առանձնանում են յուրահատուկ ոճով, հայկական թեմատիկայով:

«Ռոբերտ Սահակյանց» փրոդաքշնն այսօր աշխատում է «Անահիտ» անիմացիոն լիամետրաժ ֆիլմի վրա: Այն հավանաբար պատրաստ կլինի գալիք տարվա նոյեմբերին: «Անահիտի» մուլտֆիլմի համար ստեղծվել է հատուկ երաժշտություն, եւ ամեն ինչ մասշտաբային է լինելու: «Անահիտի» երաժշտությունը գրում է Արմեն Մարտիրոսյանը, իսկ երգերը՝ Գոռ Սուջյան, Շուշան Պետրոսյանը եւ ուրիշներ: Իսկ դերասանները լինելու են՝ Ռաֆայել Քոթանջյանը, Հրանտ Թոխատյանը, Նազենի Հովհաննիսյանը, Խորեն Լեւոնյանը եւ այլք:

«Ռոբերտ Սահակյանց» փրոդաքշնի մյուս հետաքրքրական նախագիծը նվիրվելու է Հովհաննես Թումանյանի ծննդյան 145 ամյակին՝ էկրանավորվելու են մեծ բանաստեղծի բանաստեղծությունները: Շուտով կավարտվի Փափազյանի «Կլոր աստվածներ» ֆիլմի էկրանավորումը, ապա կստեղծվի նաեւ անիմացիոն մուլտֆիլմ Վարազդատ արքայի մասին, որը հաղթել է օլիմպիական խաղերում, որը հետաքրքրական կլինի ե՛ մեր, ե՛ արտերկրի հանդիսատեսի համար:

Ի դեպ, վերջին տարիներին ՌոբերտՍահակյանցի ֆիլմերը ցուցադրվել են աշխարհի տարբեր երկրներում՝ Ֆրանսիա, Չինաստան, Իտալիա, Կանադա, Անգլիա եւ այլուր:

Թեեւ հայկական եթերում հայկական անիմացիոն արտադրանքն այդքան էլ չի շրջանառվում, սակայն Դավիթ Սահակյանցի ստեղծագործական խմբի կողմից ստեղծված «Կիլդիմ» անիմացիոն նախագիծը մեծ սեր վայելեց հանրության շրջանում՝ ինչպես իմաստային, այնպես էլ տեխնիկական լուծումների առումով եւ ծառայեց իր նպատակին:

Անիմացիան Հայաստանում այնքան խոր հիմքերի վրա է դրված, որ հասունացավ պահը ստեղծելու նաեւ անիմացիային նվիրված փառատոն՝ «Ռեանիմանիա»:

Ի դեպ, 2013 թ. Ազգային կինոկենտրոնը մուլտիպլիկացիոն ֆիլմերի արտադրության համար նախատեսված բյուջետային հատկացումներ է արել՝ «Վիշապագորգ» (բեմադրող ռեժիսոր՝ Գայանե Մարտիրոսյան), «Դանթե» (բեմադրող ռեժիսոր՝ Նաիրա Մուրադյան) եւ «Զարմանադարանը» (բեմադրող ռեժիսոր՝ Անդրանիկ Թորոսյան) անիմացիոն ֆիլմերի համար:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

## Ասմունքող Հակոբ Գույումջյանը Թեհրանում



Իրանահայ Ազգային եւ մշակութային միության հրավերով Թեհրան ժամանած լիբանանահայ սիրված ասմունքող Հակոբ Գույումջյանը հոկտեմբերի 23-ին իր առաջին հանդիպումն ունեցավ իրանահայ համայնքի հետ: Երկու ժամ տեւեց հրաշալի ասմունքի երեկոն: Թվում էր, թե անհնարին կլիներ համայնքում այդքան երկար եւ անընդմեջ ունկնդրել ասմունքը, սակայն ԻԱՄՄ-ի ոչ այնքան մեծ, բայց լեցուն դահլիճը կլանված, կարծես շունչը պահած լսում էր մեծ արտիստին՝ մերթընդմերթ երկարատեւ ծափահարություններով իր գոհունակությունն արտահայտելով:

Սկզբից դոկտ. Արմինե Ղազարյանը ողջունեց ներկաներին, շատ համառոտ ներկայացրեց Հ. Գույումջյանի կենսագրությունը, ապա բեմ հրավիրեց հարգարժան ասմունքողին:

«Ես իմ անուշ Հայաստանի»-ն այն զարթականարն էր, որով պրն. Գույումջյանի խոսքը մուտք գործեց ունկնդրի ներաշխարհ, ապա Ս. Կապուտիկյանի եւ Վ. Թեքեյանի սիրային տվայտանքները փոխանցեց, միաժամանակ բացատրելով, որ Վ. Թեքեյանը «խեղճ մարդ էր անվանում սեր չունեցող մարդկանց», եւ այլ համառոտ ու համապատասխան մեկնաբանություններ տալիս իր ընտրացանկի ստեղծագործությունների վերաբերյալ: Արտիստն ունկնդրին հասու էր դարձնում Սայաթ-Նովայի, Ս. Կապուտիկյանի եւ Ե. Չարենցի խնամքով համադրված եւ այնքան խոսուն տողերին: Լսարանի համար թանկագին էր նաեւ Հ. Սահյանի տողերից պատրաստված շքեղ մարգարտաշարը:

Հ. Գույումջյանը յուրովի շեշտադրումով ունկնդրին փոխանցեց Պարույր Սեւակի բանաստեղծությունները, նրան բնութագրելով որպես «համամարդկային տեսողությամբ բանաստեղծ, որն անմահացավ»: Իսկ Վ. Դավթյանի «Ռեքվիեմ»-ից հետո խորհրդավոր լռություն տիրեց դահլիճում, ինչին հաջորդեցին երկարատեւ ծափահարությունները: Արվեստագետը ոչ միայն ասմունքում, այլեւ ապրում էր ամեն մի տողով եւ ամբողջ եռանդով ունկնդրին էր փոխանցում զգացած ցավը, կսկիծը, ընդվզումը:

Ասմունքի երեկոյի համար լավագույն վերջաբան էր ընտրված՝ Գ. Էմինի «Սասունցիների պարը»:

Այնքան ներգործող էր արտիստի արտասանական խոսքը, որ վերջում պարզ դարձավ, թե ինչու պրն. Գույումջյանը չէր ցանկացել իր խոսքը համեմել երաժշտությամբ կամ տեխնիկական այլ հնարքներով, իսկ բեմի երկայնքով ձգվող հայոց եռագույնը համահունչ էր օրվան:

ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՄԲԱՐՁՅԱՆ
Թեհրան



## Կոմպոզիտորների միության նախագահ ընտրվեց Արամ Սաթյա-

Ընդամենը 2 ձայնի տարբերությամբ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ ընտրվեց կոմպոզիտոր Արամ Սաթյանը: Նրա հավաքած 43 ձայնը վերջ տվեց Ռոբերտ Ամիրխանյանի 22-ամյա նախագահությանը: Արամ Սաթյանը 66 տարեկան է, Երեւանի կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, բազմաթիվ մրցանակների դափնեկիր, շուրջ 300 երգերի ու ռոմանսների, 3 բալետների, 3 սիմֆոնիաների, մի շարք կոնցերտների հեղինակ, Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում եւ Արգենտինայում թողարկել է մի շարք ձայներիզներ ու խտասալիկներ:

## Արմէն Յակոբ Կրպոյեան կ՛արժանանայ «Իտալիոյ Հանրապետութեան նախագահի շքանշանին»

5 սեպտեմբեր 2013-էն սկսեալ եւ մէկ ամիս տեւողութեամբ, Իտալիոյ Սոլմոնա քաղաքին մէջ տեղի ունեցած է ժամանակակից արուեստի միջազգային տեղւոյն 40-րդ ցուցահանդէսը, կազմակերպութեամբ արուեստի եւ մշակոյթի «Իլ Քուատրիվիո» (Խաչմերուկ) շրջանակին եւ մասնակցութեամբ 20 երկիրներէ հրաւիրուած 125 արուեստագէտներու: Փակման հանդիսութեան ընթացքին, Եգիպտոսի կողմէ ներկայացած հայազգի արուեստագէտ-քանդակագործ Արմէն Յակոբ Կրպոյեան արժանացած է «Իտալիոյ Հանրապետութեան նախագահի շքանշանի» մրցանակին:

Ցուցահանդէսի մրցանքին դասական կազմին նախագահն էր արուեստի ծանօթ քննադատ Վիթորիո Սքարպի, իր կողքին ունենալով միջազգային չափանիշով արուեստի պատմաբան-քննադատներ Ջորջիո դի Ջենովա, Մասսիմո Փասքուալոնէ, Ջորջիո Սեվիզօ, Քիարա Սթրոցիէրի, Դուչիո Թրոմբադորի եւ արուեստի սոյն ձեռնարկին կազմակերպիչ ընդհանուր քարտուղար Ջայթանո Փալոցցի:

Արմէն Յակոբ Կրպոյեան ծնած է Գահիրէ 1969-ին եւ Հելուանի համալսարանին Գեղարուեստից կաճառը աւարտած 1992-ին:Հռոմի Եգիպտական Արուեստի ակադեմիային ստեղծագործութեան պետական մրցանակին արժանանալով՝ Իտալիա հաստատուած է 2000 թուականին:

2008-ին, Կրպոյեան կը տիրանայ Շուէտական KKV-B կազմակերպութեան հանրայայտ քանդակագործ արուեստագէտներու շնորհուող տարեկան «Քանդակագործութեան պարգեւ» մրցանակին: 2010-ին, ան կը շահի Փիէմոնթէ նահանգին միջազգային «Ումպերթօ Մասթրոիաննի» մրցանակը, Պերժէ քաղաքի հրապարակին կոթողական ցայտաղբիւրի իր ծրագրին յաջողութեան առթիւ:

Արմէն Յակոբի գործերը ինքնատիպ են, յատկանշուած պարզութեամբ, կտրուկ գիծերով նպատակին ձգտող, բիւրեղ, աննիւթական ու խորհրդապաշտ:

Արմէն Կրպոյեանի ստեղծագործութիւններէն նմոյշներ կը գտնուին Գահիրէի եգիպտական Արդի արուեստի թանգարանին, Ասուանի Բացօթեայ թանգարանին, Քաթարի արաբական Արդի արուեստի թանգարանին, Պելճիքայի Պօղոսեան հիմնարկի «Վիլլա Ամբէն» կեդրոնին, Իտալական Փիէմոնթէ նահանգի Պերժէ քաղաքին կայարանամերձ կեդրոնական զբօսայգիին, Մ. Նահանգներու Ֆլորիդայի «Քորալ Սփրինկզ» արուեստի թանգարանին եւ Իտալիոյ Թոսքանա նահանգին Փիէթրասանթայի Պոզէթթի թանգարանին մէջ:

Ներկայիս եգիպտահայ արուեստագէտը կ՝ապրի եւ կը գործէ Իտալիոյ Փիեթրասանթա (Սուրբ Քար) քաղաքին մէջ, որ պատմութեան ընթացքին համաշխարհային մակարդակով ճանչցուած է իբրեւ «Քանդակագործութեան մայրաքաղաք» եւ ուր գործած է մեծահամբաւ արուեստագէտ Միքելանջելօն, տեղւոյն լեռներուն նշանաւոր մարմարը օգտագործելով իր քանդակներուն համար: Սոյն քաղաքը կեդրոն հանդիսացած է 20-րդ դարու արդի արուեստի գործիչներէն Հենրի Մուրի, Սեզարի եւ Նիկոչչիի, ինչպէս նաեւ ժամանակակից արուեստագէտներ Դամիէն Հըրսթի, Անիշ Քապուրի, Մարք Քուինի եւ ուրիշներու:

ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ

# Հակոբ Մոկացյանի հիշատակին նվիրված ահել-ջահել երրորդ մրցաշարը

Շախմատի պատմությունը առատ է գեղեցիկ ստեղծագործություններով մինչեւ հիմա շախմատիստներին հիացնող անվանի վարպետների, հինավուրց խաղը հարստացրած եւ նոր մակարդակի հասցրած չեմպիոնների, թագի չարժանացած, սակայն խոր հետք թողած եւ համընդհանուր ճանաչում վայելած ուժեղագույն գրոսմայստերների անուններով: Եղել են նաեւ մարդիկ` ուսուցիչները, որ չեն ձգտել անձնական փառքի եւ տիտղոսների նվաճման, այլ դրա համար նախապատրաստել են իրենց աշակերտներին` շախմատի սեր եւ իմացություն ներարկելով, բացահայտել շնորհալիներին եւ տաղանդավորներին, հետեւողական աշխատանքով առաջ մղել նրանց:

Այդպիսին նվիրյալներից էր Հակոբ Մոկացյանը` հանրապետության շախմատի առաջին մասնագիտական դպրոցի հիմնադիրներից եւ երկարամյա ղեկավար, վաստակավոր մարզիչ եւ հանրապետության վաստակավոր գործիչ, ուսուցիչ:

Ձեւավորվող ավանդույթի համաձայն, արդեն 3-րդ տարին, Հակոբ Մոկացյանի ծննդյան օրվա կապակցությամբ շախմատի տանը կազմակերպվում է յուրահատուկ մրցաշար վետերան շախմատիստների եւ շախմատային դպրոցների սաների միջեւ: Մրցում են 60-ն անց տղամարդիկ եւ 10-16 տարեկան պատանյակներ, որոնք, սակայն, հասուն եւ կշռադատված խաղով չեն զիջում փորձառու մրցակիցներին:

Առաջին մրցավեճը հաղթել էին վետերանները, 2-րդը` անցած տարի, կրտսերները, այնպես որ սա վճռական հանդիպում էր: Շաբաթ օրը` հոկտեմբերի 26-ին, դարձյալ միմյանց դիմաց նստեցին 10-ական ահել ու ջահել շախմատիստներ, որոնց միջին տարիքային տարբերությունը առնվազն կես դար էր:

Պատանյակները երեւի այնքան վստահ էին իրենց հաղթանակին, որ հարկ չէին համարել ժամանակին ներկայանալ: Վերջապես, մարզիչների եռանդուն ջանքերով, նրանց թիմը հավաքվեց լրիվ կազմով, եւ Հակոբ Մոկացյանի սան, գրոսմայստեր, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի փոխնախագահի Սմբատ Լպուտյանի բացման խոսքից հետո մրցապայքարը սկսվեց:

Զուգահեռ ընթանում էր Հակոբ Մոկացյանի հիշատակին նվիրված եւս մեկ միջոցառում: Գրոսմայստեր, նույնպես Հակոբ Մոկացյանի սան Ռաֆայել Վահանյանը 14 խաղատախտակի վրա միաժամանակյա խաղի սեանս էր անցկացնում: Նա հաղթեց 13 պարտիայում, միայն մեկին` Սերգեյ Կասպարյանին հաջողվեց ոչ-ոքի խաղալ գրոսմայստերի հետ:



*Առաջին պլանում գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանն է միաժամանակյա խաղի սեանս տալիս: Բեմում մրցում են ահելներն ու ջահելները:*

Ի տարբերություն սեանսի` ահել-ջահել մրցավեճը հավասար էր, անզիջում, փոփոխական նվազագույն առավելություններով:

Ուրախալի էր, որ սաների թիմը գրեթե հիմնովին փոխվել էր. ընդամենը 2-ն էին անցած կազմից, ուրեմն` ուժեղացել էին, անցել առաջ: Լավ էր նույնպես, որ վետերաններից ընդամենը 2-ն էին փոխարինվել` եւ ոչ առողջական պատճառներով:

Մասնակիցներից յուրաքանչյուրը խաղաց հակառակորդ թիմի բոլոր անդամների հետ` ամեն պարտիայի համար 10 րոպե ունենալով: Կայծակնային շախմատին սովորաբար ավելի լարված ու սուր պայքարն է բնորոշ, հաճախակի սխալներով ու հուզումնառատ պահերով: Եվ հարկ է արժանին մատուցել հանրապետական կարգի մրցավար Վահան Դիմաքսյանին, որը նման իրավիճակում անթերի վարեց մրցաշարը:

Չորս ժամից ավելի ձգվող մրցաշարը փոքր առավելությամբ` 51-49 ընդհանուր հաշվով, հաղթեցին վետերանները:

Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահության անդամ, Վետերան շախմատիստների խորհրդի փոխնախագահ Ռաֆայել Չատինյանը ամփոփեց մրցաշարը: Բեմ հրավիրվեց նաեւ Հակոբ Մոկացյանի որդին` Արսեն Մոկացյանը, որը, դարձյալ ավանդույթի համաձայն, շնորհակալություն հայտնեց կազմակերպիչներին եւ մասնակիցներին: Ապա հանձնվեցին մրցանակները: Վետերաններից լավագույնը Անուշավան Առաքելյանն էր` 6,5 միավորով: Երկու թիմերի մեջ անհատապես առաջին տեղը գրավեց եւ փոխանցիկ գավաթը ստացավ շախմատային ակադեմիայի սան Աշոտ Փարվանյանը, որն աչքի ընկավ խելացի եւ համարձակ խաղով:

Ի դեպ, նախորդ մրցաշարում, որը հաղթել էին սաները, լավագույն արդյունք ցույց տվողը վետերան էր` միջազգային վարպետ Էդուարդ Մնացականյանը, որն այս տարի բավարարվեց 3-րդ տեղով: Այսպես` Կաիսան ամեն անգամ կարծես փոխհատուցում է պարտված թիմին:

Սպասենք հաջորդ հանդիպմանը` շախմատային առանձնահատուկ մթնոլորտում դարձյալ մեծարելու ուսուցչին: Ի վերջո պայծառ մարդկանց հիշատակը գոնե ինչ-որ չափով մաքրում է մեզ:

Սաները, բնականաբար, կձգտեն ռեւանշի, իսկ վետերանները... պարզապես սիրում են շախմատ խաղալ:

**ՊԱՐՈՒՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ**
2 մրցաշարերի մասնակից

# ՀԱՕԿ-ի հայտարարությունը

***Ինչպես հայտնի է, վերջերս տեղի է ունեցել վոլեյբոլի հանրապետական ֆեդերացիայի նախագահի ընտրություն, որտեղ գրանցվել են բազմաթիվ խախտումներ: Այդ առթիվ ՀԱՕԿ-ը տարածել է հայտարարություն, որում մասնավորապես նշված է հետեւյալը:***

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն չի ընդունում եւ ճանաչում Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահի ընտրության արդյունքները:

Վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահի ընտրություններն անց են կացվել մի շարք խախտումներով ու բացթողումներով: Այս ընտրությունն անցկացվել է պետական կառույցի անմիջական ներգրավվածությամբ ու ազդեցության ներքո, ինչը անթույլատրելի է, ավելին` հակասում է օրենքին:

Ֆեդերացիայի նախագահի ընտրությունն անցկացվել է Ազգային անվտանգության խորհրդի շենքում, խիստ գաղտնիության պայմաններում եւ արգելված են եղել անգամ լրատվամիջոցների եւ կոնֆերանսի բազմաթիվ անդամների մուտքը: Ֆեդերացիայի նիստը կայացվել է առանց պատշաճ իրազեկման: Մարզական ֆեդերացիայի նախագահի ընտրությունը կատարվել է կոպիտ միջամտության պայմաններում: Մասնավորապես` ֆեդերացիայի նախագահ է ընտրվել երկրի բարձրաստիճան պաշտոնյան: Նիստը կայացվել է պետական փակ ռեժիմով հաստատության շենքում, այն դեպքում, երբ անգամ երկրի նախագահը, ով նաեւ շախմատի ֆեդերացիայի նախագահն է, ֆեդերացիայի նիստերին մասնակցելու համար այցելում է շախմատի տուն, որը բաց եւ հասանելի է հանրության ու լրատվամիջոցների համար:

Համաժողովի մասնակիցների մուտքը հսկվել է անվտանգության աշխատակիցների կողմից, եւ վերջապես` ընտրություններն անցել են գործադիր իշխանության ներկայացուցչի` սպորտի նախարարի ուղղակի մասնակցության պայմաններում:

ՀԱՕԿ-ը վճռական է հետամուտ լինել խնդրի իրավական կարգավորմանը եւ սկսում է սահմանված կարգով ֆեդերացիայի հետկանչը վոլեյբոլի միջազգային ֆեդերացիայից:

ՇԱԽՄԱՏ

# Դանիելյանն ու Մովսիսյանն արժանացան անհատական մրցանակների

Հունաստանում վերջնագիծը հատեց շախմատի եվրոպական գավաթների խաղարկությունը: Կանանց մրցաշարին մասնակցած Երեւանի «Միկային» չհաջողվեց մրցանակակիր դառնալ: 7 մրցախաղերում վաստակած 9 միավորով «Միկան» 11 թիմերի մեջ զբաղեցրեց 4-րդ տեղը` միայն լրացուցիչ գործակիցներով բրոնզե մեդալները զիջելով ռուսական «Նաշե նասլեդիե» թիմին: Ինչպես սպասվում էր, չեմպիոն հռչակվեց Մոնտե Կառլոյի թիմը, որը հաղթեց 7 մրցախաղերում էլ: 10 միավորով 2-րդ տեղը գրավեց ռուսական «Յուգրան»:

6-րդ տուրում «Միկան» վիճակահանությամբ ազատ էր խաղից եւ կանոնադրության համաձայն թիմին 2-0 հաշվով հաղթանակ գրանցվեց: Իսկ ավարտական տուրում «Միկան» 3-1 հաշվով պարտության մատնեց «Պոլիտեխնիկա Անտիբիոտիկե» թիմին: «Միկայի» հաղթանակն ապահովեցին Էլինա Դանիելյանն ու Լելա Ջավախիշվիլին, որոնք հաղթեցին համապատասխանաբար Իրինա Բուլմագային եւ Ալինա Լ՛Ամիին: Հարիկա Դրոնավալին ոչ-ոքի խաղաց Կատերինա Լահնոյի հետ, Լիլիթ Մկրտչյանը հաշտություն կնքեց Վիկտորիա Չմիլիտեի հետ:

«Միկայի» կազմում առավել հաջող հանդես եկավ փորձառու Էլինա Դանիելյանը, որը 6 հնարավորից վաստակեց 4,5 միավոր` տոնելով 4 հաղթանակ: Էլինան 3-րդ խաղատախտակի վրա ցույց տված արդյունքով արժանացավ արծաթե մեդալի: Ոսկե մեդալը նվաճեց Մոնտե Կառլոյի թիմում հանդես եկող Աննա Մուզիչուկը: 4-րդ խաղատախտակի վրա հանդես եկած Լելա Ջավախիշվիլին իր թիմին 4 միավոր պարգեւեց: 1-ին խաղատախտակի վրա Հարիկա Դրոնավալին բոլոր 6 պարտիաներն էլ ավարտեց ոչ-ոքի: Իր հնարավորություններից թույլ հանդես եկավ Լիլիթ Մկրտչյանը` վաստակելով ընդամենը 2 միավոր:

Տղամարդկանց մրցաշարում Սանկտ Պետերբուրգի թիմը 11 միավորով 53 մասնակիցների մեջ գրավեց 5-րդ տեղը` լրացուցիչ գործակիցներով բրոնզե մեդալները զիջելով ադրբեջանական ՍՈԿԱՐ-ին: Չեմպիոն հռչակվեց չեխական «G-Team-ը», որը վաստակեց 13 միավոր: Արծաթե մեդալակիր դարձավ ռուսական «Մալախիտը»` 12 միավոր:

6-րդ տուրում Սանկտ Պետերբուրգի թիմը 3,5-2,5 հաշվով պարտության մատնեց թուրքական «Օդլարին»: Սերգեյ Մովսիսյանը չմասնակցեց մրցախաղին: 7-րդ տուրում Մովսիսյանի թիմը ոչ-ոքի խաղաց ՍՈԿԱՐ-ի հետ: Հայ շախմատիստը հաշտություն կնքեց Շահրիյար Մամեդյարովի հետ: Սերգեյ Մովսիսյանը 5 հնարավորից վաստակեց 3,5 միավոր: Նա 4-րդ խաղատախտակի վրա ցույց տված արդյունքով արժանացավ բրոնզե մեդալի: Ոսկե մեդալը նվաճեց Ալեքսեյ Շիրովը «Մալախիտից»:

# Ջովանի դե Կարոլիսը խնդիրներ չստեղծեց Աբրահամի համար

Գերմանիայի Օլդենբուրգ քաղաքում անցկացված մենամարտում 2-րդ միջին քաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի նախկին չեմպիոն Արթուր Աբրահամը միավորներով (120-108, 119-109, 119-109) հաղթեց իտալացի Ջովանի դե Կարոլիսին: Պրոֆեսիոնալ ռինգում դա Արթուրի 42-րդ մենամարտն էր, որում հայ բռնցքամարտիկը 38-րդ հաղթանակը տոնեց: Ջովանի դե Կարոլիսը 25-րդ մենամարտն էր անցկացնում, որում 5-րդ պարտությունը կրեց:

«Այնքան էլ գոհ չեմ արդյունքից: Կարոլիսը ողջ ուժերը ներդրեց նոկաուտից խուսափելու համար: Ցանկանում էի դիտարժան դարձնել մենամարտն ու մրցակցին հաղթել նոկաուտով, սակայն չստացվեց», մենամարտից հետո նշել է Արթուր Աբրահամը:

Հիշեցնենք, որ Արթուրը հաջորդ տարի WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը պետք է վիճարկի Ռոբերտ Շտիգլիցի հետ մենամարտում:

# Կարո Մուրադին չհաջողվեց Հոպկինսից խլել չեմպիոնական գոտին

30-ամյա Կարո Մուրադին չհաջողվեց Բեռնարդ Հոպկինսից խլել IBF-ի վարկածով կիսածանրքաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսը: ԱՄՆ-ի Ատլանտիկ Սիթի քաղաքում կայացած մենամարտում 48-ամյա Հոպկինսը հաջողությամբ պաշտպանեց չեմպիոնական գոտին` հաղթելով միավորներով (119-108, 119-108, 117-110):

Մենամարտի ընթացքում Կարո Մուրադը վնասվածք ստացավ: Հոպկինսը փորձում էր հայ բռնցքամարտիկի մարտավկաներին համոզել, որ դադարեցնեն մենամարտը, սակայն վերջիններս չհամաձայնվեցին:

«Բեռնարդը լավ բռնցքամարտիկ է: Համոզված եմ, որ եթե վնասվածք չստանայի, ապա ավելի լավ հանդես կգայի ու կկարողանայի հաղթել», հայտարարել է Մուրադը:

«Ցանկանում էի նոկաուտի ենթարկել Կարո Մուրադին, սակայն նա «ամուր ընկույզ» էր: Ես մի փոքր արյունոտվեցի, ինչը ցանկանում էին տեսնել մարզասերները: Ուրախ եմ, որ Մուրադն ինձ ջղայնացրեց: Եվ չնայած նրա ձախ աչքի տակը պատռվել էր, սակայն շարունակում էի հարվածել մրցակցիս», մենամարտից հետո նշել է **Բեռնարդ Հոպկինսը**:

Այս հաղթանակից հետո Հոպկինսը եւս մեկ ռեկորդ սահմանեց: Նա դարձավ ամենատարեց բռնցքամարտիկը, որին հաջողվեց պաշտպանել աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը: Մենամարտի օրը նա 48 տարեկան 9 ամսական էր: Նախորդ ռեկորդը պատկանում էր Ջորջ Ֆորմանին, որը տիտղոսը պաշտպանել էր 46 տարեկան 3 ամսականում:

Կարո Մուրադը 28-րդ մենամարտն անցկացրեց` կրելով 2-րդ պարտությունը պրոֆեսիոնալ ռինգում: Հոպկինսի համար հերթական մենամարտը 64-րդն էր, որում լեգենդար բռնցքամարտիկը 54-րդ հաղթանակը տոնեց:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

## Օրվա հետքերով

# Անշարժ գույքի գներն անփոփոխ են մնացել նաեւ սեպտեմբերին

### *Այս շուկան հայտնվել է լճացման մեջ*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի սեպտեմբերին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 16632 գործարք, ինչը 3,3 տոկոսով ցածր է նախորդ ամսվա՝ օգոստոսի եւ 28,4 տոկոսով՝ 2012-ի սեպտեմբերի գործարքների համեմատ:

Օտարման գործարքների քանակը սեպտեմբերին օգոստոսի համեմատ նվազել է 11,5 տոկոսով, իսկ անցյալ տարվա սեպտեմբերի համեմատ՝ աճել 11,2 տոկոսով: 4040 օտարման գործարքներից առքուվաճառքներինը կազմել է 72,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 43,9 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում: Երեւանում առքուվաճառքի գործարքների 61,4 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2013-ի օգոստոսի համեմատ, սեպտեմբերին բնակարանների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 9,7 տոկոսով, իսկ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատ աճել 49,7 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա սեպտեմբերին օգոստոսի համեմատ աննշան աճ են ունեցել: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | սեպտեմբեր 2012թ. | սեպտեմբեր 2013թ. | օգոստոս 2013թ. |
| **Կենտրոն** | **418200** | **428000** | **428000** |
| **Արաբկիր** | **346100** | **356600** | **356500** |
| **Քանաքեռ-Զեյթուն** | **274200** | **282400** | **282400** |
| **Նոր Նորք** | **237000** | **251300** | **251000** |
| **Ավան** | **246550** | **259500** | **259200** |
| **Էրեբունի** | **240000** | **249000** | **249000** |
| **Շենգավիթ** | **243500** | **255100** | **255100** |
| **Դավթաշեն** | **266200** | **275000** | **274500** |
| **Աջափնյակ** | **234000** | **248100** | **248100** |
| **Մալաթիա-Սեբաստիա** | **231300** | **241300** | **241100** |
| **Նուբարաշեն** | **141000** | **152500** | **152200** |

Մարզերում, բացառությամբ Երեւանի, սեպտեմբերին վաճառվել են 415 բնակարաններ, որոնց քանակը օգոստոսի համեմատ նվազել է 1,7 տոկոսով, իսկ 2012-ի սեպտեմբերի համեմատ՝ աճել 1,7 տոկոսով: Գներն այստեղ սեպտեմբերին օգոստոսի համեմատ աննշան աճ են ունեցել:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները սեպտեմբերին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 155 հազար հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 154 հազար դրամ, Նոր Հաճընում՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորում՝ 124 հազար դրամ, Արմավիրում եւ Գորիսում ՝ 121 հազար դրամ, Իջեւանում 118 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2013-ի սեպտեմբերին Հայաստանում գրանցվել է անհատական տների առքուվաճառքի 451 գործարք, որից 121-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առքուվաճառքի գործարքների քանակը 2013-ի օգոստոսի համեմատ նվազել է 16,6 տոկոսով, իսկ մարզերում՝ աճել 1,5 տոկոսով: 2012-ի սեպտեմբերի համեմատ անհատական բնակելի տների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 24,7 տոկոսով, իսկ մարզերում՝ 26,9 տոկոսով:

**Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) Երեւանում 2012-ի սեպտեմբերին օգոստոսի համեմատ մնացել են անփոփոխ: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գների պատկերը հետեւյալն է եղել.**

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | սեպտեմբեր 2012թ. | սեպտեմբեր 2013թ. | օգոստոս 2013թ. |
| **Կենտրոն** | **466800** | **476100** | **476100** |
| **Արաբկիր** | **374500** | **383000** | **383000** |
| **Քանաքեռ-Զեյթուն** | **284100** | **295000** | **295000** |
| **Նորք-Մարաշ** | **310700** | **319200** | **319200** |
| **Ավան** | **263800** | **270500** | **270500** |
| **Էրեբունի** | **230000** | **239500** | **239500** |
| **Շենգավիթ** | **248000** | **255000** | **255000** |
| **Դավթաշեն** | **266100** | **276000** | **276000** |
| **Աջափնյակ** | **241000** | **250050** | **250050** |
| **Մալաթիա-Սեբաստիա** | **230300** | **238000** | **238000** |
| **Նուբարաշեն** | **144500** | **150500** | **150500** |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները սեպտեմբերին օգոստոսի համեմատ դարձյալ անփոփոխ են: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է՝ 1 քմ-ն՝ 157 հազար դրամ, երրորդը՝ Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 136 հազար դրամ, Ջերմուկը՝ 131 հազար դրամ, Գորիսը՝ 130 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Իջեւանը՝ 123 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2013-ի սեպտեմբերին 2012-ի սեպտեմբերի համեմատ, հողերի առքուվաճառքի գործարքների քանակն նվազել է 8,4 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 35,5 տոկոսով:

2013-ի սեպտեմբերին օգոստոսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 5,4 տոկոսով, իսկ 2012-ի սեպտեմբերի համեմատ՝ 7,2 տոկոսով:

Սեպտեմբերին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 161 գործարքներ, որից 102-ը՝ Երեւանում: Օգոստոսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում նվազել է 16,6 տոկոսով, իսկ մարզերում՝ աճել 34,1 տոկոսով: 2012-ի սեպտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 52,2 տոկոսով, իսկ մարզերում՝ 59,5 տոկոսով:

Այսպիսով, անշարժ գույքի գները շարունակել են անփոփոխ մնալ նաեւ սեպտեմբերին: Կարելի է փաստել, որ Հայաստանի անշարժ գույքի շուկան վերջին ամիսներին հայտնվել է լճացման վիճակում:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՈՒՄ

# Վրաստանի նոր նախագահը հայտնի է, նոր վարչապետն էլ՝ մեկ շաբաթից

*1-ին էջից*

Փաստացի՝ Իվանիշվիլու թեկնածուն հաղթել է Սաակաշվիլու թեկնածուին: Առաջինը հպարտությամբ ու վստահությամբ ընդունել է հաղթանակը, երկրորդը՝ ընդունել պարտությունը, նաեւ խորհուրդ տվել, թե պետք չէ թեւաթափվել, քանի որ «յուրաքանչյուր նահանջ ժամանակավոր է»:

Ամեն դեպքում, հաշվի առնելով Վրաստանի սահմանադրության փոփոխությունները, առավել կարեւոր է դարձել հարցը, թե ով կլինի վարչապետը, այլ ոչ թե նախագահը: Հաղթած կուսակցության վարչապետացուի ով լինելը, ըստ նույն կոալիցիայի տարբեր անդամների, հայտնի կլինի մեկ շաբաթից, քանի որ կոալիցիայի ներսում հարցը քննարկվել է, թեկնածուն՝ ընտրված: Ու թեեւ ապագա վարչապետի անունը դեռեւս հայտնի չէ, վրացական իշխանական օղակները արդեն իսկ հայտարարել են, որ հենց նոր վարչապետն ու նորընտիր նախագահն էլ նոյեմբերի վերջին կմեկնեն Վիլնյուս՝ մասնակցելու Արեւելյան գործընկերության գագաթաժողովին, որտեղ նախատեսված է Վրաստանի հետ Ասոցիացման համաձայնագրի նախաստորագրումը:

Միեւնույն ժամանակ, ներկայիս վարչապետ, միլիարդատեր Իվանիշվիլին չէ, որ մեկնելու է Վիլնյուս: Նա, իր իսկ խոսքերի համաձայն, չի զբաղեցնելու այդ պաշտոնը, ավելին, հեռանալու է քաղաքականությունից՝ կուլիսներից երկիրը չկառավարելու ցանկությամբ:

Եվ քանի որ Իվանիշվիլու վարչապետության առաջնային խնդիրներից մեկը Վրաստանն առանց Սաակաշվիլու թողնելն էր, ինչը փաստացի իրողություն դարձավ կիրակի օրվա ընտրություններով, գործն արված է: Եվ եթե գործն արված է, ավելին, դեռ հնարավոր է, որ Սաակաշվիլին կանգնի դատարանի առաջ կամ առնվազն հարցաքննվի տարբեր հանգամանքների առնչությամբ, ուրեմն Իվանիշվիլու խոստումն էլ կարող է իրականություն դառնալ, այն է՝ նոր նախագահի երդմնակալությունից մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 24-ին հրաժարական տալ ու հեռանալ վարչապետի պաշտոնից:

Իվանիշվիլու՝ իշխանության գալով Վրաստանում մեծ եւ ընդգրկուն փոփոխություններ տեղի ունեցան, բայց թե ինչ կբերի իր հետ նրա հովանավորությամբ ընտրված նոր իշխանիկների խումբը ի դեմս նոր նախագահի ու վարչապետի, դեռ ժամանակը ցույց կտա: Ամեն դեպքում, նորընտիր նախագահը մինչեւ թեկնածության առաջադրումը հանրությանն անհայտ մեկն էր: Թե որքանով հայտնի ու ընդունելի կլինի ապագա վարչապետը՝ կտեսնենք:

*Հ.Գ. Քվեարկությունից երկու օր առաջ Ախալքալաք այցելած Սաակաշվիլու եւ ջավախահայ ակտիվիստ Վահագն Չախալյանի միջեւ տեղի ունեցած վեճի տեսագրությունը տարածվել է համացանցում, որտեղ հայոց լեզվի ու գրականության հարցերով Սաակաշվիլուն մոտեցող Չախալյանին Սաակաշվիլին ռուսերեն-վրացերեն խառնուխշտիկ արձագանքում է, թե Չախալյանն իրեն դատելու, հարց տալու իրավունք չունի: Այդպիսով Սաակաշվիլին եւս մեկ անգամ ապացուցեց, որ ջավախքցուն չի ընկալում որպես իր երկրի քաղաքացու, որն իրեն քննադատելու իրավունք ունի:*

*Բացի դրանից՝ Սաակաշվիլին նաեւ ի ցույց է դրել անհարգալից վերաբերմունք սեփական երկրի «արդարադատություն» կոչվող համակարգի հանդեպ, որը Չախալյանին, անարդարացիորեն, բայց դատել ու դատապարտել է ոչ երբեք անջատողականության, այլ, օրինակ, հասարակական կարգը խախտելու համար, մինչդեռ տեսանյութում մանկապարտեզային վիճաբանության ոգով հեռացող Չախալյանի հետեւից Սաակաշվիլին նրան «անջատողական», «ազգայնամոլ անջատողական» է որակում, միջադեպից հետո էլ արդեն հոգնեցնելու աստիճան կրկնած տեսությունը մատուցում, թե Չախալյանը ռուս գործակալ է:*

*Տգեղ ու ոչ ընդունելի է նաեւ Չախալյանի հայհոյախառը խոսքը, որ թեեւ Սաակաշվիլու խոսքերի արձագանքն է, բայց բնավ չի կարելի դիտարկել որպես քաղաքակրթության դրսեւորում: Առանց այդ էլ հեռացված նախագահի հասցեին «Միշա, հեռացիր» կարելի է բղավել, բայց ոչ հայհոյանքով:*


## Վաճառվում է

ավտոմեքենա «Daewoo Matiz» 2009 թ., փոխանցման տուփը՝ մեխ., շարժիչը՝ 0,8 լ բենզին, վազքը՝ 93000 կմ, CDMP3 մագնիտաֆոն «Clarion», անվադողերը նոր են, մեքենան գտնվում է գերազանց վիճակում: Գինը՝ 3700 $-ին համարժեք դրամ: Հեռ. (077) 700-710:

## ՇՏԱՊ վաճառվում կամ վարձով է տրվում

**ավտոտնակ ՀԱԹ Բ-4 թաղ.**

**055-06-28-48, 077-06-28-48**



## ԱՐԹ եւ ԼԵԳԵՆԴ

**հայկական ձեռագործներ եւ գեղանկարներ**

Ցուցասրահի բացումը տեղի կունենա հոկտեմբերի 27-ին:

Ցուցասրահը բաց է ամեն օր 10.30-19.00

Հանգստյան օրը՝ երկուշաբթի

*Երեւան, Մոսկովյան 24/4, հեռ.՝ +374 91 374073*

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 25.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: